Ազգ
Azg
26 ԱՊՐԻԼ - 2 ՄԱՅԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 014(5796)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# Եվրոպական նոր բանաձեւ՝ Բաքվին ուղղված կոչով

Եվրոպական խորհրդարանի ընդունած հերթական բանաձեւը կոչ է անում Ադրբեջանին՝ անհապաղ ազատ արձակել երկրի բանտերում պահվող քաղբանտարկյալներին: Միաժամանակ ուղերձ է արվում Եվրոպական հանձնաժողովին՝ սառեցնելու Ադրբեջանի հետ էներգետիկ համագործակցությունը, ապագայում ուզած համագործակցություն պայմանավորելով քաղբանտարկյալների ազատ արձակմամբ եւ մարդու իրավունքների ընդհանուր իրավիճակի բարելավմամբ: Խոսք է գնում նաեւ մարդու իրավունքների խախտումներ թույլ տված պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին: Բանաձեւն, իհարկե, խորհրդատվական է, սակայն նշանակալից, քանի որ այն Բաքվում Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համաժողովի անցկացումը անհամատեղելի է համարում Ադրբեջանում մարդու իրավունքների շարունակական խախտման հետ:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Պայքար՝ ստրկացման դեմ

Ալիեւը պահանջում է փոխել մեր Սահմանադրությունը, Էրդողանը «վերջին առիթ» է տալիս մեզ հրաժարվելու «պատմական հորինվածքներից» եւ «ազատագրվելու խավարից», Սփյուռքի եւ այլոց «խավարամտությունից», Պուտինը, ի դեմս Ալիեւի, քաջալերում է Ադրբեջանի հետ մեր հարցերը լուծելու «վճռականությունը», Բայդենը «մեծ առաջադիմություն» է համարում առանց միջնորդների Բաքվի հետ բանակցելու մեր «խելամտությունը», Շառլ Միշելը գոհունակություն է հայտնում ազերիների տարածքային պահանջները անտրտունջ կատարելու եւ սահմանազատման աշխատանքներն սկսելու մեր պատրաստակամության համար, եւլն, եւլն: Բոլորը, բոլորը պատրաստակամ են «օգնելու» մեզ, միայն թե այդ «օգնությունից» մենք ոչինչ չենք շահում, այլ, ընդհակառակը, զիջում ենք ու տալիս, տալիս ենք ու նորից զիջում, դառնում ստրուկ:

Չգիտեմ, քաղաքագիտության մեջ ինչպես են կոչվում այն երկրները, որոնցով «օգնելու» անվան տակ զբաղվում են բոլոր, գրեթե բոլոր արտաքին ուժերը, մինչեւ տվյալ պետությունից պետական ոչինչ չի մնում, ի վերջո սպառվում եւ ոչնչանում է:

Այդպիսի երկրներից ինձ ծանոթ է ինձ հարազատ Լիբանանը, որ անցյալ դարի 70-ականներից ի վեր, արտաքին ուժերի ազդեցության, միջամտությունների ու ներխուժումների տակ՝ կորցրեց անգամ իր գլխավոր հենման կետը՝ լիբանանյան դրամանիշը, բանկային նախանձելի համակարգը:

Ի՞նչ է սպասվում մեր երկրին, մեր պետականությանը: Այն՝ ինչը վիճակված է սեփական քաղաքականություն, ազգային արժանապատվություն, պետական սահմանները ուրիշների քմահաճությանը եւ ողորմածությանը հանձնելու պատրաստակամությունը ունեցող երկրներին. գաղութացում, ստրկացում:

Ճիշտ է, մեր պարագայում այդ պատրաստակամության տերն ու տնօրենը խորհրդարանական մեծամասնություն, բայց կառավարական 8 տոկոսանոց վարկանիշ ունեցողներն են՝ գլխավորությամբ մտավոր ու հոգեկան խնդիրներ ունեցող իր պարագլխի: Քաղաքական անոմալիա, աննախադեպ անհեթեթություն՝ որից բխում են մեր բոլոր ձախողությունները: Այդ ձախողությունները սկսվել են այն օրից, երբ նա, այդ պարագլուխը, դուռը փակեց բանակցային գործընթացի առաջ եւ լայն բացեց պատերազմի դուռը սպառազինությամբ մեզ գերազանցող թշնամու եւ մյուս թշնամիների առաջ: Այն պարագլխի, որն իր չիմացած ու չհասկացած պատերազմը տանուլ տալուց հետո կառչած մնաց աթոռին՝ շվարած ու շիվար ժողովրդին «փիլիսոփայորեն» բացատրելով, որ պարտությունը հաղթանակ է, իսկ հաղթանակը՝ պարտություն: Մնաց աթոռին, ու շարունակեց հաղթանակել պարտվելով, շարունակեց հավերժացնել պարտությունը՝ Արցախից հետո եւ Կապանից հետո հասնելով Տավուշի գյուղերին, մեր պաշտպանական դիրքերին, միջպետական ճանապարհին, ճանապարհներին:

Ընդվզում չկա՞ նրա ու նրա աքլորախմբի դեմ: Կա՛: Հետզհետե ավելի շեշտակի: Դեռ չի սպառվել հայի դիմադրական ներուժը: Ապացույց՝ Ոսկեպարի, Կիրանցի, Բաղանիսի եւ հարակից շրջանների՝ Նոյեմբերյանի եւ Ալավերդու հրապարակներում ու մայրուղիների վրա հերթապահող 96-ամյա տատիկի, Տավուշի թեմի հոգեւոր առաջնորդի, ի մի եկած գյուղացիների ու քաղաքացիների խմբերի համառ պայքարը՝ սեփական խժդուժ ոստիկանական ուժերի վայրագությունների պայմաններում: Ապացույց՝ ապրիլի 24-ին եւ նախորդ գիշեր Ծիծեռնակաբերդ բարձրացած հարյուր հազարավոր հայորդիների երթը հիշելու եւ հիշեցնելու Ցեղասպանությունը, ոգեկոչելու նահատակների հիշատակը, «ո՛չ» ասելու բոլոր ուրացողներին ու ժխտողներին: «Ոչ» ասելու Էրդողանին ու նույն լադի վրա գտնվող՝ անցյալի ու ներկայի միջեւ, պատմության եւ դրա շարունակականության միջեւ, հոգեւոր եւ իրական հայրենիքների միջեւ, հայրենիքի ու պետության միջեւ սահմանագծումներ անող հայանուն պարագլխին:

Այդ պարագլուխն իր դեմ ընդվզողների առաջ բաց է թողել ընդամենը մի բարակ միջանցք, որը տանում է դեպի արյունահեղություն: Ամեն գնով պետք է փակ պահել այդ միջանցքը. արյունահեղությունը անդառնալիորեն կկործանի մեզ: Ամեն գնով պետք է շարունակել քաղաքացիական անարյուն, բայց հետեւողական պայքարը՝ երկիրն ու պետությունը փրկելու «ազգակործան պատուհասից», նրա աջակիցներից, թշնամիների սպառնալիքներից, օտարերկրյա բարեկամների «հոգատարությունից» եւ «խղճահարությունից»:

Ստրկացման դեմ անարյուն, համակարգված ու տեւական պայքար, մինչեւ...:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Բողոքը կկասեցնի՞ սահմանազատումը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Բա լսեցի՞ք՝ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սահմանի 10-12 կմ-ը կարելի է սահմանազատված համարել, ու երկու կողմն էլ, Հայաստանն էլ, Ադրբեջանն էլ այս հարցում կառուցողական մոտեցում են ցուցաբերել: Բա: Այս մասին ասել է ինքը՝ մեծ կառուցողական ու մեծ խաղաղասեր Հեյդարիչը, ամեն օր նրա կողմից ագրեսիվ կոչեր հնչեցնելը, Հայաստանի սահմանադրությունն ու գերբը փոխել պահանջելը, Հայաստանն Արեւմտյան Ադրբեջան կոչելը, մշտական սպառնալի զառանցանքները չհաշված: Առանց Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տավուշյան տարածքների հայելային վերադարձի՝ մեր անվտանգության երաշխիք-տարածքների վերադարձ է տեղի ունենում, սրա անունն ինչ է՝ կասե՞ք, սա սահմանազատո՞ւմ է, թե՞ անդամահատում: Ի՞նչ Ալմա-Աթիի հռչակագիր, ի՞նչ սովետական սահման, ո՞վ է իրավասու առանց հանրաքվեի, առանց ԱԺ-ում քվեարկությամբ հաստատված-երկրի ամբողջական սահմանագծման նախագծի առկայության՝ մի կեսից սահման գծել, հազար սահմանագծման հանձնաժողով լինի: Սահմանադրություն ունենք, պետական սահմանի մասին օրենք ունենք, ինչ-որ անձեր կամ անձ ինքն իր խելքին կարո՞ղ է սահման որոշել կամ ձեռք-ձեռքի խփել հարեւան ոխերիմի հետ, պետությո՞ւն ենք, թե՞ սրա-նրա խաղալիքը:

Անկախ Հայաստանի մաս կազմող տարածքների հանձնման դեմ բողոքող մարդիկ՝ տավուշցիներն եւ ոչ տավուշցիները ո՛չ Ալիեւի կառուցողականությանն են հավատում, ո՛չ խոստացված խաղաղությանը, համարելով, որ առանց որեւէ երաշխիքի մեր անվտանգային տարածքների հանձնումը նման է թշնամու առաջ դուռը բացելուն: Ի՞նչ խաղաղություն, երբ ադրբեջանցիք կանգնելու են տասնհինգ մետր հեռու միայն Կիրանցի ու Ոսկեպարի հետ շփման գծից ու պարսատիկով էլ կարող են հայկական կողմ քար նետել:

Մի քանի օրից ընդամենը Ադրբեջանի սահմանապահ ուժերը, հետեւից էլ զորքը, մինչեւ ատամները զինված, իջնելու են ու կանգնեն բերաններս մտած նոր սահմանին, ու ոչ ոք չի կարող երաշխավորել, որ մի ամիս հետո նրանք չեն հայտնվի Իջեւանում, ինչպես որ Ջերմուկում հայտնվեցին: Իմ երկիրը շագրենի կաշու պես մետր առ մետր փոքրանում է, ու հազիվ թե Ադրբեջանը կանգ առնի՝ ինչ-որ անկապ թուղթ ստորագրելով. նրա աղվեսային խոսքերին մի՛ խաբվեք: Արցախի հետ կատարվածի փորձը հո թարմ է, եթե պատմության մյուս համանման դրվագները մոռացել եք:

Մեր ուժային կառույցներն էլ մի ուրիշ կարգի են հարձակվել սահմանազատման դեմ բողոքողների վրա, քարշ են տալիս, ձեռք ոլորում, բերման ենթարկում: Ինչո՞ւ, ի՞նչ է եղել, մարդիկ համաձայն չեն վերին որոշումներին, թող արտահայտվեն, բա ասում եք՝ ժողովրդավարություն: Ինչ աստիճան եք քաշքշել, որ ԱԺ տավուշցի պատգամավոր **Գառնիկ Դանիելյանի** ինքնազգացողությունը վատացել է, սա՞ է ժողովրդավարությունը: Շշմել կարելի է ամեն օր կատարվող նորանոր իրադարձություններից: Սեփական ժողովրդի կարծիքն անտեսելով, ռասպուտինյան ոճի մեջ սահման ե՞ք գծում: Մի պահ այս բոլորն ինձ հիշեցրեց Հայաստանի անկախանալու պահին մեր՝ իբր ծայրահեղականների դեմ պայքարող ռուսական հատուկ ծառայությունների աշխատաոճը:

⇨4

# Գույժ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Չորեքշաբթի օրը, ապրիլի 24-ին, 93 տարեկանում կյանքից հեռացավ նշանավոր պատմաբան, Հայաստանում արեւելագիտության եւ հատկապես արաբական երկրների պատմագիտական դպրոցի հիմնադիր, պրոֆ. **Նիկոլայ Հովհաննիսյանը**: Ավելի քան 500 գիտական աշխատությունների, դրանց թվում՝ շուրջ 80 մենագրությունների ու գիտական հարյուրավոր հոդվածների, այդ թվում՝ «**Ազգ**»-ի էջերում լույս տեսած, հեղինակ էր նա: Բացառիկ՝ նաեւ արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում արաբերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն եւ այլ լեզուներով լույս տեսած 100-ից ավել իր հոդվածներով:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը մեկ տասնամյակից ավել տնօրենն է եղել Հայաստանի Արեւելագիտության ինստիտուտի, հասցրել բազմաթիվ կադրեր, որոնք ՀՀ արտգործնախարարությունում ու դեսպանություններում վարել եւ վարում են պատասխանատու պաշտոններ:

Նրա մենագրություններից առավել հայտնի են «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում», «Անկախ Սիրիական Հանրապետության ստեղծումը», «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում», «Լիբանանյան ճգնաժամը եւ Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը» աշխատությունները: «**Ազգ**»-ի խմբագրության համագործակցությամբ հրատարակվել է նրա «Քրդական գործոնը եւ Հայկական հարցը» մենագրությունը, վերահրատարակվել Ավետիս Փափազյանի «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» աշխատությունը «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի մեկենասությամբ:

Հոգեհանգստյան արարողությունը տեղի ունեցավ երեկ, ապրիլի 25-ին: Հուղարկավորությունը տեղի կունենա այսօր, «Ջոլեր» սգո սրահից (հասցե՝ Գ. Հասրաթյան փ. 25/3):

Ցավակցություններ տիկնոջը, մյուս հարազատներին եւ ընկերներին:

Մեծ պատմաբանի կյանքին ու գործունեությանը ավելի ընդարձակ մեր անդրադարձումը՝ առաջիկա համարներում:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Մեր փոխադրակառքերն ու քաղաքացին

Այս նոր տասերը (ես «տաս» ըսեմ, դուք «աւտոբուս» հասկցէք) որքան որ օգտակար դարձան եւ ուրախացուցին ժողովուրդը, նոյնքան ալ տուայտումի ու շփոթելու պատճառ դարձան արդէն իսկ շուար ու շփոթահար խեղճ քաղաքացիին համար: Թէեւ տակաւին մայրաքաղաքի կարգ մը փողոցներուն վրայ ծառայութեան մէջ են հիներէն մնացորդներ, որոնք, կը յուսանք՝ մօտիկ ապագային կը փոխարինուին նորերով: Այդ հիները երկու դուռ ունէին, մարդիկ ընդհանրապէս ետեւի դռնէն կը բարձրանային եւ առջեւի դռնէն կ՚իջնէին՝ վարորդին փոխանցելով ուղեվարձը: Եթէ այնքան մը ծանրաբեռնուած ըլլար տասը եւ ոտքի մնացողներով խցանուած ըլլար միջանցքը, ետեւ մնացողին 100 դրամանոցը ձեռքէ ձեռք կը ճամբորդէր եւ ապահով կը հասնէր վարորդին, իսկ եթէ 200-նոց էր, ապա անոր մնացած 100-ը վերադարձի ճամբով դարձեալ ձեռքէ ձեռք կը ճամբորդէր մինչեւ հասնէր տիրոջը:

Հիմա նոր եկած տասերէն մէկը, որ արդէն երեք տարի է կը գործէ, փոքր է, մէկ դուռ ունի, եւ դրամարկղ, այդ դուռէն կը մտնեն ու կ՚ելլեն ուղեւորները: Չմոռնամ ըսելու, որ երբ նոր մէկը կը բարձրանայ, վարորդը վիզը կ՚երկարէ վստահ ըլլալու համար, թէ դրամը ինկա՞ւ գանձանակին մէջ, եւ այս վիզի շարժումը օրական քանի-քանի անգամ կը կրկնուի եւ, պատկերացուցէք, ինչ ցաւեր կը պատճառէ, որ կրնայ վիզի «տիսք»ի ալ պատճառ դառնալ: Սուր լսողութիւն ունեցող վարորդները պէտք չունին ետեւ դարձնելու իրենց գլուխները, որովհետեւ կրնան որսալ մետաղեայ դրամին գանձանակին մէջ անկման «քլիք« ձայնը:

Յաջորդ տասերը կարմիրներն են, որոնց մուտքը առջեւի դռնէն է, քանի բարձրացողը անմիջապէս դրամը պիտի նետէ առջեւը տեղադրուած դրամարկղին մէջ եւ ապա անցնի ներս ու իջնելու ատեն ալ օգտագործէ ետեւի դուռը: Աւելի նորերը կանաչ, երկար տաս-թրոլէյպուսներն են, որոնք 3 դուռ ունին եւ յայտնի չէ թէ որ դռներէն կարելի է մտնել եւ որմէ դուրս ելլել:

Հիմա փորձենք այս «ոստը» մաքրել, ինչպէս կ՚ըսէին մեր մեծերը, խնդիր մը պարզաբանելու համար: Ուրեմն քաղաքացիին դիմաց կան 4 տեսակ փոխադրակառքեր՝ մէկուն ետեւէն պիտի մտնես եւ առջեւէն իջնես, միւսին նոյն դուռէն պիտի մտնես ու նոյն դուռէն իջնես, յաջորդին՝ առջեւի դռնէն պիտի մտնես եւ ետեւի դռնէն իջնես, իսկ ամենանորին երեք դռներէն ալ կրնաս մտնել եւ իջնել... Ես այս տողերը գրելու ատեն գլխապտոյտ ունեցայ, հապա խեղճ քաղաքացի՞ն:

Հիմա պատկերացնենք, որ ամենաշատ տարածուած կարմիր տասով պիտի ճամբորդենք, ուրեմն առջեւի դռնէն պիտի բարձրանանք. լա՛ւ, բարձրացանք, ու ետեւ անցանք սահուն կերպով, եւ ասիկա՝ բախտաւոր պարագային: Հապա՞, եթէ յանկարծ չար բախտէդ քեզմէ առաջ կին է բարձրացողը... Հոս է արդէն պատուհասը. գանձանակ նետելիք դրամդ ձեռքդ կը սպասես, ետեւիններդ ալ կը սպասեն, որովհետեւ այստեղ ըլլալիք կարեւոր արարողութիւն մը կայ. բոլոր կիներուն նման, այս կինն ալ ունի թեւէն կախուած մեծկակ պայուսակ մը, ճզզզդ, պայուսակին բերանը կը բանայ, բացաւ, հիմա կը սկսի պեղումի աշխատանքը, այդ խառնարան պայուսակին մէջ կնոջ ձեռքը շօշափելով բան մը կ՚որսայ, վերջապէս կը գտնէ: Մի՛ ուրախանաք անմիջապէս, գտածը դրամը չէ, այլ կաշիէ դրամապանակ մը, որուն բերանն ալ՝ վզզզդ կը բացուի ու մէջի տասնեակ մը գրպանիկներուն մէջէն մանրուքներու գրպանիկը կը բացուի՝ չը՛թ. ու կը սկսի հարիւր դրամանոցի փնտռտուքը... Վարորդը ծուռ-ծուռ կը նայի, ետեւինները ջղային շարժումներ կ՚ընեն, իսկ կինը շատ հանգիստ 100-նոց մը կը փնտռէ, բախտաւոր պարագային կը գտնէ ու վերջ՝ չըթ, վզզզդ, ճզզզդ դրամապանակ, պայուսակ, ամէն ինչ իր տեղը կը վերադառնայ: Մէկը բռնէ սա կնոջ ուսերէն ու լաւ մը ցնցէ ու ըսէ՝ այ կնիկ, մայթին վրայ կեցած ատենդ չկրցա՞ր դրամը պատրաստել, գրպանդ դնել, որ այսքան մարդ քու տնտնալուդ զոհ չերթայ: Դեռ կ՚ըսեն կիները շատ զգոյշ են: Թերեւս «էին», սակայն հիմա երբ ձեռքի հեռախօսը մէջտեղ եկաւ, անոնց ամբողջ ուշքն ու միտքը հոն կեդրոնացաւ, ո՞վ պիտի մտածէ նստելավարձը պատրաստ պահել ձեռքը, կամ գրպանին մէջ... Հազիւ նստած, եթէ մէկը զիջեցաւ տեղը, նոյն կինը նոյն պայուսակէն կը հանէ հեռախօսը ու կը սկսի բարձրաձայն իր անվերջանալի տեղեկատուութեանց, առանց մոռնալու նոր տասերը քննադատող մէջբերում մըն ալ ընել:

Տակաւին ըսողներ կան, որ մեր առօրեան տափակ է, անհետաքրքիր. խնդրեմ ժամանց ու զբաղո՞ւմ կ՚ուզէք, տաս բարձրացէք. 100 դրամով թէ՛ կը ճամբորդէք, թէ՛ հաճելի անակնկալներու կը հանդիպիք: Իսկ եթէ վաղը 100-ի փոխարէն 200, կամ 300-ի բարձրացնեն ուղեվարձը, երեւի այն ատեն տասերը պիտի օժտուին հեռատեսիլով ու ֆիլմեր ցուցադրեն:

# Իրանը հարգում է Հայաստանի եւ Ադրբեջանի որոշումները

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագէտ



Տավուշի մարզի Ոսկեպարի, Բաղանիսի եւ հարակից գյուղերի Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ Հայաստանի ընդունած որոշման մասին Թեհրանի պաշտոնական դիրքորոշումը նախ իր ձեւակերպումն ստացավ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան **Մեհդի Սոբհանիի**՝ ապրիլի 19-ին հնչեցրած հայտարարության մեջ: Անդրադառնալով ՀՀ փոխվարչապետ **Մհեր Գրիգորյանի** եւ ԱՀ փոխվարչապետ **Շահին Մուստաֆաեւի** նախագահությամբ տեղի ունեցած պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի հերթական հանդիպման արդյունքում Տավուշի մարզի չորս գյուղերն Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ ընդունված որոշմանը, դեսպան Սոբհանին նշեց.

«Հայ պաշտոնյաները մեզ տեղյակ են պահել այսօր կայացած սահմանազատման հանձնաժողովների հանդիպման ու արձանագրության բովանդակության մասին: Մեզ ասել են, որ համաձայնությունները ձեռք են բերվել Ալմա Աթայի հռչակագրի հիման վրա, այսինքն՝ միջազգային սահմանների հիման վրա, սակայն ինձ տեղեկացրել են նաեւ, որ այն տարածքը, որտեղով անցնում է միջպետական մայրուղին, չի մտնում համաձայնագրի մեջ»:

Իսկ ԻԻՀ ԱԳՆ խոսնակ **Նասեր Քանանին** ապրիլի 23-ին հայտարարել է, որ Իրանը հարգում է Հայաստանի եւ Ադրբեջանի հանրապետությունների սահմանազատման հանձնաժողովի որոշումները: Նրա խոսքերով՝ «Սահմանային հարցերը խաղաղ ճանապարհով եւ միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը հարգելու միջոցով կարգավորելուն ուղղված երկու երկրների տեւական ջանքերը Հարավային Կովկասում խաղաղություն եւ կայունություն հաստատելու անհրաժեշտ պայմանն է»:

Սակայն Իրանում կան նաեւ հայկական գյուղերի հանձնումը Իրանի ազգային շահերի հետ հակադրության մեջ տեսնող շրջանակներ: Թավրիզում հրատարակվող *azarpazhouh* կայքը, որն իր առջեւ Իրանում թյուրքական աշխարհի ծավալած պանթուրքիստական արշավն ու հավակնությունները ձախողելու ազգանպաստ խնդիր է դրել, անդրադարձել է Տավուշի չորս գյուղերի հանձնման թեմային եւ ***«Թեհրանի լռության պայմաններում՝ Ալիեւի ագրեսիվ քաղաքականությունն ու Փաշինյանի պարտվողական կեցվածքը»*** խորագրով հրատարակած հոդվածում մասնավորապես գրել է.

«...Այս տարածքը Բաքվի վերահսկողությանն անցնելուց հետո, Ալիեւին կհաջողվի տիրանալ կարեւորագույն բարձունքների, ինչը նպաստավոր պայմաններ կապահովի՝ Հայաստանի վրա ավելի լայնածավալ ագրեսիա իրականացնելու նպատակով նոր ռազմական հենակետեր ու ամրություններ կահավորելու առումով: Բացի այդ, ոչ մի երաշխիք չկա, որ Երեւանի կողմից վերահսկվող տարածքներն Ադրբեջանին հանձնվելուց հետո, Բաքուն նոր պահանջներ չի ներկայացնի:

Հայաստանի արեւմտյան հատվածում գոյություն ունի մի անկլավ, որի նկատմամբ Ադրբեջանը հավակնություններ ունի: Վրաստանով անցնող ռուսական գազամուղը հենց այս տարածքում է գտնվում: Թեեւ այս հատվածը դեռ Ադրբեջանին չի հանձնվել, սակայն տարածքների հանձնման այս մեթոդաբանությունը հաշվի առնելով՝ ոչ մի երաշխիք չկա, որ Հայաստանը կկարողանա տնօրինել նշված գազամուղը»:

Այնուհետեւ հոդվածագիրն անդրադառնում է հայ-իրանական տարանցիկ ճանապարհի վրա գտնվող եւ Նախիջեւանին հարող Տիգրանաշենի հանձնման հեռանկարին, ինչը, ըստ հոդվածագրի, Իրանին աշխարհաքաղաքական «շնչարգելություն» կպատճառի:

Հոդվածագիրը համոզված է, որ այս տրամաբանությամբ երկկողմ բանակցությունները կհանգեցնեն ի վնաս Հայաստանի միակողմանի զիջումների, որի հետեւանքով կանտեսվեն նաեւ Իրանի շահերը:

Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ավարտն ազդարարող եռակողմ համաձայնագրի հրապարակումից ընդամենը մեկ շաբաթ առաջ՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ին, Իրանի հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեին** խոսել է Հարավային Կովկասի ճգնաժամը կարգավորելու հարցում Իրանի պաշտոնական դիրքորոշման հիմքում եղած չորս սկզբունքի մասին՝

1. 90-ականներին Հայաստանի կողմից գրավված Ադրբեջանին պատկանող բոլոր տարածքները պետք է ազատագրվեն:
2. Ազատագրված տարածքներում բնակվող հայերի անվտանգությունը պետք է պաշտպանված լինի:
3. Միջազգայնորեն ճանաչված սահմանները չպետք է փոփոխության ենթարկվեն:
4. Ռազմաճակատում ներդրված ահաբեկիչները ոչ մի պարագայում չպետք է տեղակայվեն Իրանի հետ սահմանակից շրջաններում:

# «Թուրքիան թմրադեղերի տարանցիկ կենտրոն է դառնում»

«Ոստիկանությունը առգրավեց Թուրքիայի պատմության մեջ կոկաինի երրորդ ամենախոշոր խմբաքանակը». Ստամբուլից տեղեկացնում է «Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը՝ հիմնվելով երկրի ներքին գործերի նախարար **Ալի Երլիկայայի** կատարած հայտարարության վրա: Կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարող վերահսկիչ մարմնի անդամները ահազանգել են, որ երկիրը դեպի Եվրոպա առաքվող թմրադեղերի տարանցիկ կենտրոն է դառնում: «Գլխավորապես երեք նահանգներում կատարված օպերատիվ գործողությունների արդյունքում առգրավվել է շուրջ 608 կգ կոկաին, մեծ մասը հեղուկ վիճակում», սոցցանցերում տարածել է Երլիկայան: Առգրավվել են նաեւ թմրադեղերը մշակելու համար նախատեսված մոտ 830 կգ քիմիական նյութեր:

Ըստ Երլիկայայի, ոստիկանությունը թիրախավորել է միջազգային մի բանդա, որի ենթադրյալ ղեկավարն է լիբանանա-վենեսուելացի մի անձնավորություն, որն էլ կազմակերպված հանցագործության դեմ պայքարող խմբավորման ձերբակալած 4 օտարերկրացիներից եւ 9 թուրքերից մեկն է: Խմբավորման համոզմամբ, Թուրքիան գնալով ավելի մեծ միջանկյալ կենտրոն է դառնում Հարավային Ամերիկայից դեպի Եվրոպա առաքվող կոկաինի, քանի որ Նիդեռլանդների նավահանգիստներում (Ռոտերդամ, եւայլն) խստացրել են անվտանգության պայմանները:

«Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ գործող գլոբալ նախաձեռնության» (GIA-TOC) անդամները անցյալ տարվա հոկտեմբերին ներկայացրած իրենց զեկույցում նշել էին, որ 2021-22-ի ընթացքում կոկաինի առգրավման 44 տոկոսի աճը Թուրքիայում չէր արտահայտված ներքին սպառման ցուցանիշներում, «ինչը խոսում է այն մասին, որ երկիրը հնարավոր է դառնա թմրադեղերի տարածման միջանկյալ հենակետ»: 2021-ին, ոստիկանությունը 1.1 տոննա կոկաին էր հայտնաբերել եւ առգրավել Միջերկրականի Մերսին նավահանգստում: Խմբաքանակը թաքցրած է եղել Էկվադորից ներմուծվող բանանի արկղներում: Անցյալ տարվա հունիսին պաշտոնն ստանձնելուց ի վեր Ելրիկայան խիստ միջոցներ է իրականացնում հակազդելու համար այն պնդումներին, որ երկիրը օտար ավազակախմբերի ապաստան է դարձել: Նա պարբերաբար մանրամասնություններ է տեղադրում սոցցանցերում ոստիկանության իրականացրած օպերատիվ գործողությունների վերաբերյալ, որոնք ուղղված են հայտնաբերելու թմրադեղերի առեւտրով զբաղվողներին: Վերջերս տեղադրած նրա տեսաժապավենում հսկայական բեռնարկղներ էին եւ մի մամլիչ, որ օպերացիան իրականացնողները հայտնաբերել էին Թեքերդաղում եւ Կոչայելիում (Ստամբուլի հարավարեւելյան մասում): Բանդայի գործակալները Թեքերդաղի եւ Անատոլիայի խաղողի այգիներն էին օգտագործել պահեստավորելու համար իբր պարարտանյութ քողարկված, կոկաինը մշակելու իրենց քիմիական նյութերը: «Մենք չենք հանդուրժելու ոչ ազգային, ոչ էլ միջազգային քրեական հանցագործների գործունեությունը», գրել էր նախարարը:

Անգլ. թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

«The Armenian Mirror-Spectator»

# Երեւանը` արդեն 20 տարի անտրամվայ, Գյումրին համարյա այդքան` անտրոլեյբուս, ապա նաեւ` առանց ավտոբուսների

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

*Գյումրի*



ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում ապրիլի 6-ին նշել են տրամվայի աշխատանքի 125-ամյակը: Քաղաքային իշխանությունը Բելոռուսական կայարանի մոտ տարբեր սերունդների տրամվայների շքերթ ու ժողովրդական տոնախմբություն էր կազմակերպել, որին ներկա է եղել ավելի քան 200 հազար մարդ: Տեղի լրատվամիջոցների հաղորդմամբ, այս քաղաքի փողոցներով միայն տվյալ ռելսային տրանսպորտով այժմ կատարվում է օրական միջին հաշվով ավելի քան 600 հազար ուղեւորափոխադրում: 2017 թվականից քաղաքում էլեկտրատրանսպորտի այս համակազմն արդեն 95 տոկոսով նորացված է, նախատեսվում է մինչեւ 2030 թվականն ունենալ վերջին սերնդի ավելի հարմարավետ, ցածրահատակ եւ որոշակի քանակությամբ նոր վագոններ: Շարունակվում է տրամվայի ուղիների նորացումն ու ավտոուղիներից առանձնացումը, արդեն այս տարվա ամռանը պետք է գործարկվեն առանց վարորդի տրամվայներ...

Այս ամենը մեզ համար իբրեւ կենդանի հեքիաթ է հնչում, այնպես չէ՞: Զարգացած բազմատեսակ տրանսպորտային համակարգով, գերծանրաբեռնված երթեւեկությամբ, նաեւ համարյա ամբողջ քաղաքի տակ մետրո ունեցող մեգապոլիսում իր ուրույն տեղն ունի նաեւ տրամվայը:

Մեր մայրաքաղաքի տրամվայը եւս մեզ համար հեքիաթ է դարձել, բայց` անցյալո՛ւմ մնացած... Երբ տողերիս հեղինակը տասնվեց տարեկանում Լենինականից գնացքով առաջին անգամ ինքնուրույն Երեւան եկավ ու պետք է գնար հասներ ռադիոկոմիտե, տեղյակ հարազատի խրատ տվածով մայրաքաղաքի երկաթուղային կայարանից նստեց 2-րդ երթուղու տրամվայն ու գնաց, հարցնելով իջավ համապատասխան կանգառում: Հետո, երբ Պետհամալսարանի ուսանող էինք, դասերից հետո իջնում էինք այս նույն` Շախմատի տան դիմացի կողմի, Գետառի մյուս ափի հարազատ դարձած կանգառը, սպասում վերեւից եկող հենց 2-րդ երթուղու տրամվային եւ կամ այդտեղից ոտքով շարունակում ճանապարհը:

Հիմա մենք էլ պիտի հոբելյան հիշենք, բայց ավելի ճիշտ` հակահոբելյան: 20 տարի... Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով` անկախացած Հայաստանի մայրաքաղաքում առկախվեց ու 2004 թվականի հունվարի 21-ին դադարեցվեց 1933 թվականից գործող էլեկտրաքարշական տրամվայի, տրանսպորտի այդ տեսակի երթեւեկությունը:

Երեւի ակնհայտ է, որ ինչպես ուրիշ նման հարցերում, այստեղ էլ մեղավորն, ավելի շատ, մեր երկրի անկախացման արշալույսից ի վեր իշխանություն ստացածների եւ նրանց հովանավորյալների շրջանում ձեւավորված, երկիր քանդող եսակենտրոն հոգեբանությունն է: Ըստ շրջանառված տարբեր տվյալների, իր լավագույն ժամանակներում Երեւանի տրամվայի ցանցը, միացնելով մայրաքաղաքի համարյա բոլոր հատվածները, ունեցել է 96 կիլոմետր ընդհանուր երկարություն, 11-12 երթուղի, որոնց սպասարկել է 3 դեպո: Իսկ արդեն 90-ականների վերջերից սկսվել է համակարգի կարծես հետեւողական մարումը: Նախկինում պետությունը լրավճար (դոտացիա) էր տրամադրում համակարգին, որը 2000-ական թվականների սկզբից վերացվեց` պատճառ դառնալով նրա պարտքերի կուտակման: Եվ իշխանությունները հայտարարեցին, թե քաղաքում տրամվայն անարդյունավետ է, պարտքեր է կուտակել եւ խանգարում է... այլ տրանսպորտի աշխատանքին: Պարզ չէ՞ որ` արդեն առաջ եկող գծատերերի երթուղայինների, ինչպես նաեւ նորաղաների գիլդայի ծառայողական մեքենաների անկասելի երթեւեկին: Ու արդեն համակարգի աշխատանքի դադարեցման պահին գործում էր տրամվայի ընդամենը մեկ երթուղի:

Այս կապակցությամբ հենց 2004 թ. հունվարի 23-ին ուշագրավ մի թվաբանություն է հրապարակել Նիկոլ Փաշինյանի «Հայկական ժամանակ» օրաթերթը: Ըստ այդմ, մինչեւ 1988 թվականը Երեւանի տրամվայներից ամսական ստացվում էր մոտ 20 մլն դրամի հասույթ, որը բավարարում էր աշխատավարձերը վճարելուն, գծերի վթարային նորոգումներին եւ մասամբ էլ` էլեկտրաէներգիայի ծախսը փակելուն: Իսկ 2003 թվականին, քաղաքապետարանի տվյալներով, հասույթը կազմել է ընդամենը 6 մլն դրամ` այն դեպքում, երբ միայն էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 8 մլն դրամ: Դա, ըստ հոդվածի հեղինակի, նման էր նրան, ինչ կատարվեց «Հայկական ավիաուղիների» հետ կապված` մինչեւ 1988 թ. միլիոնավոր դոլարների շահույթ, 1998-ից հետո` նույնքան վնասներ եւ ի վերջո լուծարման որոշում: Ասում են` հիմա Երեւանում կարելի է տեսնել տրամվայի միայն մեկ վագոն, այն էլ` մանրակերտը: Այն էլ` թանգարանում...

«Զորեղ» ախորժակավորների համար երեւի առավել գայթակղիչ էր տրամվայի գծերը հանելո՛ւ շահավետությունը. Ավելի քան 8000 տոննա մետաղե ռելսեր` մի փոքր մասը պաշտպանության նախարարությանը տրված, մնացած մեծ մասը չգիտես ինչ եղած, նաեւ այդքան պղնձե էլեկտրալար... Էլ ի՞նչ քաղաքային մշակույթի տարր, էլ ի՞նչ ուղեւորների սպասարկում:

Եվ մի՞թե մայրաքաղաքում երթեւեկության ծանրաբեռնվածությունը թեթեւացել է: Ընդհակառակը, «գազելների» գրոհը մի կողմից (գոնե հիմա այս հարցը կարծես թե սկսում է կարգավորվել), սեփական մեքենաների չափազանց շատությունը մյուս կողմից, մինչդեռ աշխարհի առաջատար քաղաքներում, որտեղ տրամվայների ցանցն, ընդհակառակը, զարգանում, շարժակազմը կատարելագործվում է, մեքենատերերը ավելի հաճախ գերադասում են երթեւեկել լավ կարգավորված հասարակական տրանսպորտով եւ լրացուցիչ լարվածություն չեն ստեղծում:

...Ցավոք, նույն երեւույթը մի քիչ այլ տարբերակով, բայց մոտավորապես նույն մեխանիզմով կատարվեց նաեւ հանրապետության երկրորդ մեծ քաղաքի` Գյումրու հասարակական տրանսպորտի պարագայում: 1962 թվականից գործող, արդեն 4-5 երթուղով տրոլեյբուսները իրենց պղնձե էլեկտրագծերով հանդերձ քաղաքի փողոցներից վերացան 2006 թվականին... Ասում էին` տնտեսական դատարանի մի դատավորի որոշմամբ, կարծեմ էլեկտրացանցին պարտքերի պատճառով: Կարծում ենք` իրականում դրա համար նաեւ հատուկ ստեղծված պայմանների պատճառով: Ինչպես Երեւանում` տրամվայի գծերի դեպքում, այստեղ էլ պղնձե կոնտակտային էլեկտրալարերն ապամոնտաժվեցին շատ մեծ արագությամբ, ոչ ոք ոչ մեկին որեւէ բացատրություն ո՛չ այդ ժամանակ, ո՛չ հետագայում չտվեց, հասարակությանը հաշիվ չտրվեց` որը ինչքա՞ն էր, մնացածը ո՞ւր գնաց, մեր հաշվից ի՞նչ գրպաններ հոսեց...

Գյումրիում, ի դեպ, սկզբում արդեն հնամաշ ավտոբուսները նեղում էին տրոլեյբուսներին, հետո «գազելները» սկսեցին նեղել ավտոբուսներին, ու հիմա այդ առաջիններից ոչ մեկը չկան, 21-րդ դարի քաղաքը միայն «գազելների» հույսին է:

Ասացինք միայն մայրաքաղաքի տրամվայների եւ Գյումրի քաղաքի էլեկտրատրանսպորտի ու ավտոբուսների մասին: Բայց ինչքան այսպիսի ուրիշ բաներ էլ նման շարժառիթներով վերացվեցին այսքան տարիների ընթացքում:

Ինչո՞ւ եւ մինչեւ ե՞րբ. ա՛յս է խնդիրը:

## Կոպիրկինը հեռանո՞ւմ է Հայաստանից



Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինն առաջիկայում հնարավոր է լքի մեր երկիրը: «Ազգ»-ի տեղեկություններով` դեսպանին մեկ ուրիշը կգա փոխարինելու: «Ո՞վ»,- հարցրեցինք մեր աղբյուրին: «Թե ով, չգիտեմ, բայց ակնհայտ է, որ դեսպանն առաջվա էնտուզիազմը չունի: Ըստ երեւույթին, իմացել է, որ շուտով ավարտվելու է իր առաքելությունը, եւ նախկինի պես նույն հավեսով չի մասնակցում բոլոր միջոցառումներին»,- լսեցինք ի պատասխան:

Նշենք, որ Կոպիրկինը դեսպան նշանակվել էր 2018-ին ապրիլի 6-ին` Հայաստանում քաղաքական վերադասավորումներ լինելուց բացառապես օրեր առաջ:

Նա մինչեւ Հայաստանում դեսպան նշանակվելը Եվրամիությունում ՌԴ մշտական ներկայացուցիչն է եղել:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

## Թվով 20 սահմանային սյուն արդեն տեղադրվել է







Մինչ Տավուշի մարզից սահմանազատում սկսելու դեմ հախուռն բողոքի ցույցեր են Տավուշում, Երեւանում, այլ վայրերում, հինգշաբթի փակվել էին Երեւան-Մեղրի միջպետական ճանապարհի Տիգրանաշենի հատվածը, Երեւան -Գյումրի մայրուղու Ալագյազի հատվածը, Երեւան- Վարդենիս ճանապարհի Մարտունու հատվածը, Տավուշի Կիրանց գյուղի կամրջի հատվածը, որտեղ վրան է տեղադրվել ` բողոքի գործողություն իրականացնողների մշտական ներկայություն ապահովելու համար, հայ-ադրբեջանական սահմանին անվրդով սյուն են տեղադրում: Ըստ կառավարության տարածած տեղեկատվության` Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին, գեոդեզիական չափումների հիման վրա, կոորդինատների ճշգրտման աշխատանքների շրջանակներում, 2024 թվականի ապրիլի 25-ի դրությամբ տեղադրվել է թվով 20 սահմանային սյուն: Երկու կողմի գեոդեզիական խմբերը շարունակում են անվրդով աշխատել:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Լեմս Ներսիսյանի «Անկորույս Սյունիք» ցուցահանդեսը՝ որպես հայրենապաշտության պատգամ

*Ավ. Իսահակյանի անվ. կենտրոնական գրադարանում ազգային գրադարանային շաբաթը մեկնարկեց «Անկորույս Սյունիք» ցուցահանդեսի բացմամբ: Գեղանկարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Լեմս Ներսիսյանի** սյունյաց աշխարհում վրձնած 86 կտավներից ներկայացված էին 58-ը:*



«Անկորույս Սյունիք» ցուցահանդեսի բացումն ապրիլյան այս օրերին մի առանձին խորհուրդ ունի: Այն Լեմս Ներսիսյանի արվեստային ընթացքի մի դրվագը լինելով՝ միաժամանակ մարդ-քաղաքացու՝ հայրենիքի հանդեպ սիրո եւ նվիրման յուրատիպ արտահայտությունն է, արձանագրումը մեր սերնդին վստահված այն ժառանգության, որ անհիշելի ժամանակներից արյամբ ու քրտինքով պահվել, պահպանվել է մեր նախնիների կողմից ու ասվել՝ չկորցնե՛լ, չզիջե՛լ, չհաշտվե՛լ պարտության եւ կորստի գաղափարի հետ... Ահա թե ինչու նաեւ «անկորույս...»: Նկարչի խոսքով, այս շարքը նաեւ հայրենաճանաչության նպատակն ունի: Կտավներին հայոց սահմանագծերին լեռ ու ժայռեղեն բարձունքներից զառիվեր ու զառիվայր խուռն ծաղկունքն է, գետերի հորդումը, հեռավոր հորիզոնների գունափոփոխը, խաղաղ բնակավայրերի անդորրությունը, եւ ամենուր՝ բնության գեղանկարչական նրբանուրբ վերծանումներ, որ ներսիսյանական արվեստի անշփոթելի կնիքն են կրում: Այստեղ ներկայացված գործերի մեջ է «Շվանիձոր»-ը:



Այս ցուցադրության գործերին ծանոթանալիս՝ մտովի ակամա տեղափոխվեցի սրանից ուղիղ երեք տարի առաջ, դարձյալ ապրիլի 15-ին, Հայաստանի նկարիչների միությունում բացված ցուցահանդեսը, որ «Էրգիր Ավետյաց» խորագիրն ուներ:

Համաշխարհային մեծության արվեստագետների, գիտնականների, քաղաքական գործիչների, Մեծ մարդասերների մտքերը, որոնցով նրանք դատապարտել են Ցեղասպանությունը եւ հանդես եկել՝ հօգուտ հայության դատի, ներդաշնակորեն տեղ էին գտել կտավների վրա, որոնցում պատկերված էին Արեւմտյան Հայաստան, պատմական Կիլիկիա, Անի եւ Պոնտոս, Բյուրակն եւ Վան, այլուր այցերի ժամանակ նկարչի տեսածն ու զգացածը: Կորստի ցավը, հարկավ, կեղեքել է նրա հոգին, բայց ինչպես Լ. Ներսիսյանն է ասում, շրջել է ո՛չ կորուսյալ վայրերում, այլ տիրոջ զգացողությամբ՝ Ավետյաց, ասել է, թե՝ խոստացված էրգրում: Չկա՛ հրաժարում մեր նախնիների հողից ու ժառանգությունից, չկա՛ հրաժարում հիշողությունից, ինչի մարմնացումն էին նրա կտավները: Այդ էրգիր ավետյացի անքակտելի մասն է մեր անկորույս Սյունիքը, որի ամեն ծեղ հողը, ամեն, անգամ, չոր քարակտորը, էլ չեմ խոսում՝ բարեբեր երկիրս, սահման պահող գյուղակներս, հայոց պատմության հերոսական դրվագներին առնչվող տեղավայրերի անգամ հիշեցումը պարտավորեցնող ու նաեւ ապրեցնող է: Ահա



Լեմս Ներսիսյանի մի գեղանկարը`«Ծիրանածորի սահմանին» խորագրով, որն ունի իր բանաստեղծական ընթերցումը.

*Փշալարից անդին՝ ծիրանաթույր ժայռեր,*
*Պղնձահունչ կեսօր եւ ոսկու ցանք,*
*Բաց փիրուզե լանջեր՝ դեպի գետը հոսող,*
*Եվ հոգին պարուրող ալեծփանք:*
*Արաքսի մեջ՝ ոսկու արտացոլանքը պերճ,*
*Գծագրումը գետի՝ իբրեւ սահման,*
*Բազալտ ափունք հոխորտ ամուր պատնեշել են*
*Աշնանը խաղաղված ընթացքը հաշտ:*
*Սակայն ծածանումը լույս - լեղակ երկնքի*
*Ո՞վ կարող է կարգել իրեն կամքով,*
*Սահմանումը մարդկանց վաղուց անարդար է,*
*Փշալարից վեր եմ փնտրում Աստծուն:*

# Բողոքը կկասեցնի՞ սահմանազատումը

⇨1

Մեր ուժային կառույցներն էլ մի ուրիշ կարգի են հարձակվել սահմանազատման դեմ բողոքողների վրա, քաշ են տալիս, ձեռք ոլորում, բերման ենթարկում: Ինչո՞ւ, ի՞նչ է եղել, մարդիկ համաձայն չեն վերին որոշումներին, թող արտահայտվեն, բա ասում եք՝ ժողովրդավարություն: Ինչ աստիճան եք քաշքշել, որ ԱԺ տավուշցի պատգամավոր **Գառնիկ Դանիելյանի** ինքնազգացողությունը վատացել է, սա՞ է ժողովրդավարությունը: Շշմել կարելի է ամեն օր կատարվող նորանոր իրադարձություններից: Սեփական ժողովրդի կարծիքն անտեսելով, ռասպուտինյան ոճի մեջ սահման ե՞ք գծում: Մի պահ այս բոլորն ինձ հիշեցրեց Հայաստանի անկախանալու պահին մեր՝ իբր ծայրահեղականների դեմ պայքարող ռուսական հատուկ ծառայությունների աշխատաոճը:

«Կառուցողական սահմանազատման» լուրերը առաջինը ողջունել են եվրոպաներից ու ամերիկաներից ով ասես՝ տոյվոկլաարներ, շառլմիշելներ, ԱՄՆ Պետդեպի մամուլի քարտուղարն էլ չէ՝ քարտուղարի քարտուղար Վեդանտ Պատելն անձամբ, թե բա՝«Ողջունում ենք լուրը, որ Հայաստանն ու Ադրբեջանն ընդունել են 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագիրը՝ որպես երկու երկրների միջեւ սահմանների սահմանազատման հիմք:

Սա կարեւոր քայլ է դեպի կայուն եւ արժանապատիվ խաղաղության համաձայնագիր»: Պարզվում է բոլոր արեւմտյանները սովետիզմի թաքնված երկրպագուներ են եղել, սովետական սահմանների ջատագով, ու մի ուրիշ կարգի եռանդով են ողջունում Ալմա -Աթիի հռչակագրից դեռ մեկ տարի առաջ անկախություն հռչակած երկրի՝ ՀՀ-ի սահմաններից կտոր-կտոր պոճոկումն ու հանձնումը՝ չգիտես ինչու սովետական բովանդակությամբ հռչակագրով: Ռուսաստանը լռում է, բայց Ադրբեջանի հետ այս պահին մի ուրիշ կարգի մերձեցած այս երկիրը հավանաբար բաժնետեր է Ադրբեջանից մեզ պարտադրվող որոշումներում, անգամ կարող է ներկայություն ունենալ սահմանազատման գործընթացում, իզուր չէ, որ սահմանազատման գործընթացի անվտանգությունը հսկող հայ ԱԱԾ-ականների լուսանկարների ծածկված դեմքերի բաց մնացած հատվածներում ողջ համացանցը խոշորացույցով ռուսական դիմագծեր ու աչքեր է որոնում:

Բոլոր այդ ողջունողները ներկա էին եւ կոչեր էին անում ե՛ւ այն ժամանակ, երբ տեղի էր ունենում Հայոց ցեղասպանությունը, ե՛ւ այն ժամանակ, երբ մինյանց էին նվիրում հայկական հողերը՝ որպես պատերազմական ռազմավար, ե՛ւ Արցախը հանձնելուց ու նրա բնիկ ժողովրդին վտարելուց եւ ունեզրկելուց: Այնպես որ՝ ե՛ւ այդ կոչ անողներին գիտենք, ե՛ւ նրանց կոչերի արժեքը:

Իսկ Հայաստանի քաղաքական համակարգն ու հակահամակարգը այս էլ քանի տարի միասին, ժամավաճառությամբ, պասերով մեզ բոլորիս բերին- հասցրին անդառնալի պրոցեսների: Նորից մեր գլխին աշխարհաքաղաքական ծրագրեր են կոտրում: Իրականացվում է մի ծրագիր, որի հանգուցալուծումը կարող է շատ ավելի վատը լինել, քան պատկերացնում են Տավուշի տարածքները հանձնելու դեմ պայքարող սովորական մարդիկ, չնայած այդ պայքարը մի չորս ուղղությունից վերահսկողության տակ պահողները հավանաբար մեծ ծրագրի նպատակները գիտեն:

Ի՞նչ է վերջնանպատակը. արդյոք միասնական պետության կազմ մտնել հարկադրե՞լը, վերադարձ դեպի անցյա՞լ, չնայած արեւմտամետ խաղերի. տարբեր կողմի պայքարողնե՛ր, թաքնված ու բացահայտ ազդեցության գործակալնե՛ր, մի՛ թաքցրեք, ասե՛ք, որ հայ ժողովուրդն անելիքն իմանա, դուք էլ հայ եք կարծես:

Խաղաղությունից խոսողների ամենավերեւի շերտն ի՞նչ գիտի այս ամենից՝ չէ՞ որ անզեն աչքով է տեսանելի, որ ոչ թե հայտարարված-միամիտ գործընթացների իրականացում է, այլ թաքնված ծրագրի՝ պայքարող հասարակ մարդկանց մեծ մասի համար անհայտ վերջնանպատակով:Դադարեցրեք մեր ժողովրդին աչքերը կապած անհայտ ուղղությամբ տանելը:

Հիմա Հայաստանում տեղի ունեցողը հար եւ նման է Արցախում կատարվածին: Սա այն դեպքը չի, որ այս կամ այն ղեկավարին անձամբ լավ վերաբերվելով՝ հայրենիքի կորուստ հանդուրժես: Երբ մինչեւ ատամները զինված ադրբեջանական զորքը ոտքով մի կողմ տշի անհասկանալի սիմվոլիզմ փոխանցող թվերով իբր սահմանազատման սյուներն ու առաջանա դեպի Հայաստանի ներս՝ այն ժամանակ ուշ կլինի, ու մեղքը կընկնի բոլորիս վրա, որ հիմարի պես չենք ըմբռնել գործընթացների իրական ենթատեքստը:

Դա շուտով տեղի կունենա: Բայց մինչ այդ ավելի ցավալի բաներ չլինեն: Օրինակ՝ հանկարծ ու չպարզվի՝ Հայոց ցեղասպանության համար հենց հայերս ենք մեղավոր, ցեղասպանություն էլ չի եղել, այլ՝ ցավալի իրադարձություններ միայն, որոնց մեղավորը հենց մենք, հայերս ենք, ու, ոնց որ **Էրդողանն** է պահանջում, պետք է հրաժարվենք «անհիմն հիշողություններից»: Կամ նոր զինանշան դեմ տան՝ առանց Արարատի (բա թուրքերից պահանջեք առանց լուսնի ու աստղերի դարձնեն իրենց գերբը): Կամ նոր սահմանադրություն դրվի սեղանին, **Ալիեւի** ու Էրդողանի սրտով՝ առանց Արցախի մասին հիշատակման, առանց Հայաստանի անկախության հռչակագրին հղումների, դե Ալմա-Աթիի հռչակագրին հղումով կբավարարվենք, էլի:

Այս բոլորի մեղքը մեր ուսերին է: Անգամ հիմա են մարդկանց ավելի լայն շերտերն անտարբեր, քանի որ տասնյակ տարիներով, եւ հիմա նույնպես, Հայաստանում առկա համակարգն ու հակահամակարգը նույն նախագծողների ծրագրով են գործել, նրանց մինիմում ու մաքսիմում ծրագրերը միայն իշխանության գալը կամ մյուսին իշխանությունից զրկելն է եղել: Մարդիկ այդ երկուսից էլ հոգնել են, անգամ եթե նրանք այժմ ռուսամետ-արեւմտամետ պայմանական բաժանումն ունեն: Այս պահին հարկավոր է արտահամակարգային մտածողություն, արտաքին խաղացողներից չկախված մարդկանց համախմբում, որի առանցքը ոչ թե սեփական իշխանությունը պահելն է, կամ իշխանությունը վերցնելու իդեա-ֆիքսը, այլ երկրի ինքնիշխանությունը չկորցնելը, երկրի անվտանգությունը, այն էլ ոչ թե միայն բառերով, այլ գործով: Եթե լինեին այդ արտահամակարգային մարդիկ, նրա՛նք առաջնորդեին մարդկանց, ապա չէր ծնվի **Մհեր Գրիգորյանի** ստորագրությամբ սահմանազատման հանձնաժողովի՝ Հայաստանի միակողմանի զիջումների թուղթը, եւ սահմանազատումը Տավուշից սկսելու զավեշտալի որոշումը չէր լինի, չէր լինի այս վիճակը, սկսված բողոքի ինքնաբուխ ակցիաները հայրենիքի անվտանգության գերակա նպատակով միայն կկանոնակարգեին այդ արտահամակարգային մարդիկ, եւ ոչ թե մարդկանց արդարացի բողոքը կօգտագործեին աշխարհաքաղաքական կենտրոնների թաքնված տիկնիկավարները:

Բանը բանից անցել է: Հիմա Երեւանի փողոցներում, Տավուշում, սահմանին մոտիկ այլ հատվածներում կատարվողը նշան է նրա, որ ջինը շշից դուրս է եկել, ու այդ ջինը կարող են գործածել ե՛ւ իրոք ազնիվ մարդիկ, ե՛ւ անհասկանալի նպատակ ունեցողները: Ու դրա մեղավորը լայն առումով մեզ այս հանգրվանին հասցրած իշխանությունն է: Տավուշից միակողմանի զիջումներով սահմանազատում անվանվածը դոմինոյի շարժով շարունակվելու է, Ադրբեջանն անընդհատ պահանջելու է, եւ դրա դեմ բողոքը լեգիտիմ է: Չնայած հազիվ թե բողոքը կասեցնի սկսված գործընթացը, բայց ինչ-որ բան կփոխի:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Երբ գնում ես երազանքիդ հետքերով





«...Մեքենայով անցնում էինք այն վայրով, որտեղ Վան Գողը նկարել է բանտարկյալներին. այնտեղ արեւածաղկի դաշտերն են, որ ինքը հաճախ է նկարել: Մեքենան կանգնեցրինք, մտանք դաշտերը, քաղեցինք հինգ արեւածաղիկ... պիտի ունենայինք այն դաշտի արեւածաղիկները, որ Վան Գողն էր նկարել: Ու հետո ճանապարհը շարունակեցինք. գնացինք Մարսել...»:

Մեկ տարի Մարսելի Գեղարվեստի ակադեմիայի ուսումնառությունը շատ բան է տվել **Կարապետ Հաջի-Ասլանյանին**: Ֆրանսիական մթնոլորտի ու միջավայրի տպավորություններն արտահայտություն են գտել նրա գրաֆիկական գործերում, ջրաներկ, յուղաներկ, խառը տեխնիկայով արված նկարչական բազմաթիվ աշխատանքներում: Նրա «Երազանքի հետքերով» ցուցահանդեսը բացվեց Գեղարվեստի պետական ակադեմիայի Արամ Իսաբեկյանի անվան դահլիճում, վերջերս: Նման մի ցուցահանդես դրանից առաջ ունեցավ Ճարտարապետների միությունում:

Ֆրանսիական La Croix շաբաթաթերթը հայ ուսանողի մասին ծավալուն հոդված էր տպագրել անցած տարի՝ «Աքսորի մեջ գտնվող հայկական ընտանիքի հետքերով». «Ղարաբաղի կորսված նկարները» խորագրով: Թերթի երկու թղթակից 2020 թվականի պատերազմից հետո այցելել էին Ղարաբաղ, ամայացած հայկական գյուղական տան բակերից մեկում նկատել հեղինակային ստորագրությամբ մատիտանկար դիմանկարներ, կարեւորել եւ իրենց հետ տարել Փարիզ: 2021- ի ապրիլին նրանք նորից այցելում են Հայաստան, շրջում սահմանային բնակավայրերով, լինում են Տավուշում, հանդիպում, զրուցում մարդկանց հետ ու զարմանալի պատահականությամբ հանդիպում են դիմանկարներից մեկի բնորդին, նրանից ստացած տեղեկությունների տպավորությամբ փնտրել են սկսում հեղինակին: Իսկ նա՝ Կարապետ Հաջի- Ասլանյանը, այդ ժամանակ արդեն սովորում էր Մարսելում: Այդ դիմանկարները նա արել էր Ղարաբաղում ծառայելիս: Կարապետի հետ նրանց զրույցի եւ թղթակիցների տպավորությունները ղարաբաղյան այցից տպագրվում են La Croix պարբերականում: Այս մասին հոդված տպագրվել է նաեւ «**Ազգ**» շաբաթաթերթում:

Երիտասարդ արվեստագետն իր երազանքի առաջին հետքերը, զգացողությունները, որ ունեցել է ֆրանսիական հողում, շատ անմիջական է փոխանցել կտավներին, որոնցում անթաքույց սեր կա ֆրանսիական մշակույթին ու նկարչությանը: Աշխատանքներում սիրելի նկարիչների ազդեցություններ չկան, որ տեսնում ենք, իր սեփական հայացքն է, իր տեսածի, շոշափածի, զգացածի արտահայտություններն են, իր վերաբերմունքը ֆրանսիական արվեստին, որտեղ Սեզանի տունն ու ծառերն են, Էդգար Դեգայի պարուհիների (բալերինաների) ներշնչանքները, Վան Գոգի նավերը, կամուրջները, լաստանավերը՝ Կլոդ Մոնեի: Դահլիճում ստեղծված մթնոլորտը, այսպես ասած, ֆրանսիական էր՝ արվեստային, թեթեւ, ռոմանտիկ: Այս տրամադրությունը շարունակեց նկարիչն ինքը՝ ակորդիոնով հնչեցրած Ազնավուրի հրաշալի մեղեդու հնչյուններով:

Կարապետը Ֆրանսիայից վերադարձել է նոր փորձով ու բավական հարուստ տպավորություններով եւ շարունակում է ուսումը ՀԳՊԱ -ի գրաֆիկայի բաժնում: Ցուցահանդեսը նրա ֆրանսիական ուսումնառության հաշվետվությունն էր եւ կազմակերպված էր ֆրանկոֆոնիայի միջոցառումների շրջանակում:

Հիշողությունները դեռ թարմ են, աչքերում փայլ կա, երազանքներ կան. «Մարսելի ակադեմիան գտնվում է անտառի մեջ, Ազգային արգելոցի պարկում, նպաստավոր պայմաններ՝ նկարչի համար ստեղծագործելու: Դասից դուրս գալուց հետո հաճախ ժամանակ էր լինում պտտվելու արգելոցի տարածքում, այնտեղ կան ձկների հազվադեպ տեսակներ, որ ուրիշ տեղ չէիր տեսնի»,- պատմում է նա:

Տարբեր մոտեցումներն ու ուսուցման մեթոդները մոտիվացման նոր աղբյուր են եղել: «Նրանց մոտ առաջնայինն ավելի ազատ նկարչություն է, շեշտը դրվում է ինստալացիաների եւ մտածելակերպի վրա, այսինքն՝ չի կարեւորվում ինչպես, ինչ տեսակով կանես նկարը՝ դասական ոճով, թե աբստրակտ, կարեւորը՝ գործը ներկայացնես այնպես, ինչպես զգացել, պատկերացրել ես:

Ֆրանսիական միջավայրը ինձ շատ բան տվեց, ավելի շատ մոտիվացրեց հետագա քայլերս, գնահատված զգացի: Այնտեղի մասնագետները իրենց կարծիքը բոլորովին այլ տեսակետից են հայտնում, այսինքն՝ իրենք քեզ սովորեցնում են ինչպես ներկայացնես նկարը, ինչպես ներկայացնես քեզ. այդ դաշտում մեզ մոտ պակաս կա մի քիչ»:

Երազանքի իրականացման մեկ տարի, կյանքի մի հատված, որ անջնջելի հետք կթողնի ձգտումներով լի երիտասարդ նկարչի հոգում: «Երազի պես էր, երբ հանդիպեցի Դեգայի բալերինաներին, տեսա Դելակրուայի նկարները: Առաջին անգամ եղա Դեգայի եւ Մանեի համատեղ ցուցահանդեսում, Փարիզի Օրսեյի թանգարանում: Մոտիկից բոլորովին ուրիշ տպավորություն է. Օրսեյում բալերինայի քանդակին մեկ ժամից ավելի նայում էի, ուսումնասիրում...»:

Անհնար էր, որ չգնար Վան Գոգի հետքերով, չանցներ այն վայրերով, որտեղով քայլել է նա: «Եղա Առլում, այն սրճարանում, ուր հաճախ էր նա գնում, հայտնի կամուրջը նկարեցի այն նույն աթոռի վրա, որտեղ նստել է նա: Այնտեղ ցուցանակներ կան, թե որ դիտակետից է նա նկարել»:

Իսկ «Աստղազարդ գիշերը» նրան տարել է Սան Ռեմի, որտեղ Վան Գողը հավերժացրել է գիշերային երկնքի, պահի՝ միայն իրեն հայտնի միստիկան, ապրած խորհուրդն ու... եկեղեցին:

Ցուցահանդեսից դուրս գալուց զգացի, որ ներսում տիրող բանաստեղծական տաք, ազատ մթնոլորտը թարմ շնչառությունն էր արեւածաղկի դաշտերի...

# Հնարավո՞ր է բռնել Ադրբեջանի՝ վանդալիզմի սովոր ձեռքը

***Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրն էր ապրիլի 18-ին: Այս առնչությամբ «Ազգ»-ը մի քանի հարց է ուղղել վերականգնող ճարտարապետ Աշոտ Հակոբյանին:***

**- Պրն Հակոբյան, թեեւ պետությունը (մասնավորապես ԿԳՄՍ նախարարությունը) անընդհատ հայտարարում է այս կամ այն հուշարձանը վերանորոգելու մասին, բայց Հայաստանում ավերվող կամ փուլման վտանգի տակ գտնվող եկեղեցիների, վանքերի կամ այլ շինությունների թիվը չի պակասում: Ինչո՞ւ:**

- Կա մի քանի պատճառ: Նախ քաղաքացիները պետք է հասկանան ու գիտակցեն, որ եկեղեցիների պատերին տարատեսակ գրություններ անելը, պատերին մոմ վառելը վնասում է ոչ միայն ընդհանուր տեսքը, այլեւ դրանք հետագայում պատերի վրայից քերելով՝ վնասում ենք շինությանը: Այսինքն՝ պատերը բարակում են, տեսքից ընկնում եւ այլն: Քիչ են նաեւ վերականգնող մասնագետներն ու արհեստավորները: 1990-ականների արտագաղթի ալիքը նաեւ ճարտարապետներին ու շինարարներին հասավ, եւ այսօր երբեմն խնդիր է լինում քարի հետ աշխատողի, քարտաշի գտնել: Եվ, իհարկե, պետությունն ինչքան էլ ֆինանսավորի այս ոլորտը, հավելյալ ծախսերի ու գումարի տեղ միշտ էլ կա, որովհետեւ Հայաստանում որտեղ փորում ես, հուշարձան է բացվում: Ավելի քան 25 հազար հուշարձան կա, որոնք խնամքի ու պահպանության կարիք ունեն:



**- Որո՞նք են վերականգնման հրատապություն ունեցող հուշարձանները:**

- Տավուշում Դեղձուտի եկեղեցին է, Դսեղի Քառասնից մանկանցն է եւ էլի շատերը, որոնք հերթով թվարկելը դժվար կլինի:

**- Հուշարձանների պահպանության օրը ցավով ենք խոսում վայ-հարեւանի տիրապետության տակ մնացած մեր կոթողների մասին, որոնք ոչ թե պահպանության, այլ պաշտպանության կարիք ունեն: Ի՞նչ կարող ենք անել Արցախի՝ ավելի քան 4000 հուշարձանկոթողներն ինչ-որ ձեւով փրկելու համար:**

- Այն, որ Ադրբեջանի նախագահը մտադիր է ոչնչացնել հայկական հետքը Արցախում, պարզ էր հենց 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ 2020-ին Հադրութի հայկական եկեղեցում ասում էր, թե «հայերն իրենցով են արել ալբանական եկեղեցին, հետեւաբար պետք է վերականգնել պատմական արդարությունը»: Պատմական արդարությունն, իհարկե, սոսկ մեր կողմից է, որովհետեւ եկեղեցիների վրայի արձանագրությունները միայն բավարար են, որ չտեսնել ու չլսել ցանկացողն անգամ համոզվի՝ տառերը հայերեն են, խաչքարերը՝ Հայ առաքելական եկեղեցունը: Ի՞նչ կարող ենք անել. գուցե հասնել նրան, որ տեսախցիկներ տեղադրվեն այդ կոթողների մոտ, ինչը քիչ հավանական է: Կամ էլ ամենուր եւ բոլոր խողովակներով բարձրաձայնել, որ միջազգային փաստահավաք խմբերը գնան, հաշվառեն հայկական եկեղեցիները, խաչքարերն ու այլ շինությունները, որ վայրագ հարեւանը դրանք պղծելուց առաջ մի պահ գոնե կանգ առնի ու հիշի՝ դրանք հայերից բացի արձանագրել ու ֆիքսել են նաեւ օտարերկրացի մասնագետները:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆԻ անհատական ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում




Այսօր, ապրիլի 26-ին, Թեքեյան կենտրոնում կբացվի գեղագետ, արվեստաբան-գծանկարիչ, ԵՊՀ դոցենտ Լեւոն Լաճիկյանի անհատական ցուցահանդեսը, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի կազմակերպմամբ:

Հրավիրվում է արվեստասեր հասարակությունը:

# Հայաստանի տնտեսության վիճակը ԵԱՏՄ-ի գագաթաժողովի նախօրեին

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Քաղաքական վերլուծաբան,
Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող,

*Մայիսի 8-ին Մոսկվայում տեղի կունենա ԵԱՏՄ Բարձրագույն խորհրդի հոբելյանական նիստը: Պաշտոնական աղբյուրները հաղորդում են, որ դրան կմասնակցի Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանը: Նկատի ունենալով, որ հայկական հասարակությունը մի շարք քաջ հայտնի պատճառներով բծախնդրորեն է ուսումնասիրում մեր արտաքին քաղաքականության այդ վեկտորի հետ կապված խնդիրները, հարկ համարեցինք մի վերլուծականով անդրադառնալ եվրասիական տնտեսական գործընթացին Հայաստանի Հանրապետության մասնակցության ամենաթարմ վիճակագրական տվյալներին եւ վերլուծել դրանք:*

*Տողերիս հեղինակը խնդրել է տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մեր ճանաչված տնտեսագետ Թաթուլ Մանասերյանին մի ընթացիկ հետազոտություն կատարել մեր երկրի տնտեսական վիճակի կարեւորագույն տվյալների վերաբերյալ: Մենք ելնում ենք այն իրողությունից, որ հարկ է հստակ պատկերացնել Ռուսաստանի եւ ԵԱՏՄ գործընկերների դերը մեր տնտեսության մեջ, ձեւակերպելու համար մեր արտաքին քաղաքական առաջնահերթությունները: Ստորեւ ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում պրոֆ. Թ.Մանասերյանի հետազոտությունից արված քաղվածքները մեր քաղաքատնտեսական մեկնաբանություններով եւ կանխատեսումներով:*

## Տնտեսական ակտիվության շարժիչները տարվա սկզբին

Հայաստանի արտաքին տնտեսական շրջանառությունը 2024թ. հունվարին կազմել է 2,1 մլրդ. դոլար: Տարեկան աճը դանդաղել է 93,8%-ից մինչեւ 78,8%-ը: Այդպես լինում է ամեն տարի: Դա տեղի է ունեցել արտահանման ծավալների տեմպերի արգելակման արդյունքում 72,5%-ից մինչեւ 61,4%-ը: Աննշան դանդաղել է նաեւ առանց այդ էլ բարձր արտահանման մակարդակը 2,3 անգամից մինչեւ 2,1 անգամ: Արտահանումը հունվարին կազմել է 1,2 մլրդ. դոլար: Միայն հունվար ամսին արտաքին առեւտրաշրջանառությունը կրճատվել է 24,1%-ով, ներկրման անկման հաշվին 11,2%-ով եւ արտահանման կրճատման հաշվին 36,1%-ով:

Հայաստանում 2024թ. հունվար-փետրվարին անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 13,6%: Սա շարունակում է մնալ շատ բարձր ցուցանիշ: Միայն փետրվարին այդ ցուցանիշը աճել է 16,3%-ով: Ուշագրավ է արդյունաբերության ծավալների աճը 28,9%-ով (միայն փետրվարին՝ 36,4%-ով), որովհետեւ 2023թ. մեծ մասում այդ ծավալները չէին աճել, գտնվելով 1%-ի շրջակայքում: Անցած տարվա նոյեմբեր-դեկտեմբերից սկսած արդյունաբերական ծավալները սկսել են նորից աճել, հիմնականում ոսկերչական եւ ծխախոտագործական արտադրանքի աճի հաշվին: Շատ կարեւոր է, որ ոսկերչական արտադրանքի ծավալները հունվարին աճել են 11,3 անգամ, ինչը ստիպում է մտածել, որ սա կապված է վերարտահանման հետ, չնայած դա դեռ պետք է ստուգել:

Այլ խոշոր ոլորտներից հարկ է նշել ալկոհոլային խմիչքները, պլաստմասսայից եւ կահույքի արտադրանքը: Շատ բարձր (ավելի քան 20%) աճ է գրանցել քարի եւ ավազի արտադրությունը, ինչի արդյունքում աճում է նաեւ շինարարության ոլորտը, որտեղ գրանցվել է 10,8% աճ (միայն փետրվարին՝ 11,7%): Գրանցվել է առեւտրի աճ 24,1%-ով (միայն փետրվարին՝ 28,3%):

Շատ նշանակալից է ռելոկանտների եւ զբոսաշրջիկների գործոնը: Նրանց ակտիվության պայմաններում առեւտուրն ու ծառայությունները շարունակում են աճել, չնայած աճի տեմպերը նվազել են: Տարվա սկզբի երկու ամիսներին արտահանումն աճել է 2,6 անգամ (անցյալ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ), կազմելով 2 մլրդ. 570 մլն. դոլար: Ներկրումը աճել է 70%-ով, կազմելով 2 մլրդ. 766 մլն. դոլար: Չնայած արդյունաբերության եւ տնտեսության մյուս առաջատար ճյուղերի տպավորիչ աճին, էլեկտրաէներգիայի արտադրանքը հունվար-փետրվարին կրճատվել է 4,9%-ով:

2024թ. հունվար-փետրվարին արտաքին առեւտրական շրջանառությունը մեծացել է երկու անգամ, կազմելով 5,3 մլրդ. դոլար:

Այսպիսով, այս տարվա հունվար-փետրվարին արտահանման եւ ներկրման ծավալները գործնականում հավասարվել են:

## Հայաստանի հիմնական առեւտրական գործընկերները տարվա սկզբին

2024թ. հունվարի դրությամբ Հայաստանի առաջատար առեւտրատնտեսական գործընկերներն են Ռուսաստանը, Արաբական Միացյալ Էմիրությունները եւ Չինաստանը: Եվրոմիությունը, որը մի քանի տարի առաջ մեր երկրի խոշորագույն առեւտրական գործընկերն էր, այժմ զբաղեցրել է 4-րդ տեղը:

Վիճակագրական կոմիտեի տվյալներով այս տարվա հունվարին, անցյալ տարվա հունվարի համեմատությամբ արտաքին առեւտրական շրջանառությունը մեծացել է 78,8%, հասնելով 2,1 մլրդ. դոլարի: Առեւտրական շրջանառության ծավալներով Հայաստանի խոշորագույն գործընկերը շարունակում է մնալ Ռուսաստանը, որի հետ ապրանքաշրջանառությունը այս տարվա հունվարին անցած տարվա հունվարի համեմատությամբ աճել է 93%-ով, հասնելով 861 մլն. դոլարի: Ընդ որում, արտահանումը Հայաստանից Ռուսաստան մեծացել է 5,5%-ով, կազմելով 247 մլն. դոլար, իսկ ներկրումը Ռուսաստանից մեծացել է երեք անգամ, հասնելով 630 մլն. դոլարի: Ռուսաստանի հետ առեւտրի ծավալների շեշտակի մեծացումը հանգեցրել է Հայաստանի արտաքին առեւտրի կառուցվածքում այդ երկրի մասնաբաժնի մեծացմանը 37%-ից (2023թ.) 40,1%-ի (2024թ.):

Մեր առեւտրական գործընկերների շարքում երկրորդ տեղում Արաբական Միացյալ Էմիրություններն են: Այս տարվա հունվարի արդյունքով անցած տարվա հունվարի համեմատությամբ ապրանքաշրջանառությունն ավելացել է 7 անգամ, հասնելով 339 մլն. դոլարի: Այս տարվա հունվարին Հայաստանի արտահանումը դեպի ԱՄԷ կազմել է 335 մլն. դոլար, իսկ ներկրումն այդ երկրից՝ ընդամենը 3,6 մլն. դոլար: Արդյունքում ԱՄԷ-ի մասնաբաժինը մեր արտաքին առեւտրական շրջանառության մեջ նույնպես աճել է 4,1%-ից (2023թ.) 15,8%-ի (2024թ.):

Երրորդ տեղում Չինաստանն է, որի հետ առեւտուրը կազմել է 199 մլն. դոլար: Առեւտուրն այդ երկրի հետ ավելացել է 9,3%-ով: Արտահանումը Չինաստան աճել է 2,3%-ով, կազմելով 94 մլն. դոլար, իսկ ներկրումը՝ միայն 3,2%-ով, կազմելով 105 մլն. դոլար:

Եվրոպական Միությունը, որը շատ տարիներ առաջ Հայաստանի գլխավոր առեւտրական գործընկերն էր, այժմ զբաղեցնում է միայն չորրորդ տեղը: 2024թ. հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատությամբ առեւտրական շրջանառությունը նվազել է 16,3%-ով եւ կազմել է 140 մլն. դոլար: Նույն ժամանակահատվածում հայկական ապրանքների արտահանումը ԵՄ կրճատվել է 38%-ով, կազմելով 33 մլն. դոլար: ԵՄ-ից ներկրումը նույնպես նվազել է, այս անգամ 24%-ով, կազմելով 106,8 մլն. դոլար:

Այս ցուցանիշների համապատկերում տեղին է քննարկել մեր անելիքները:



## Հայաստանի տնտեսության այս պահին հասանելի կանխատեսումները 2024թ. համար

Միջազգային Արժութային հիմնադրամը բարելավել է Հայաստանի ՀՆԱ-ի աճի կանխատեսումը 2024թ. համար նախկին 5%-ից մինչեւ նորացված 6%-ը: Հիշեցնենք, որ 2023թ. ՀՆԱ-ի աճը կազմել է 8,7%: Կանխատեսվում է, որ հաջորդ, 2025թ. աճի տեմպերը կնվազեն, հասնելով 5,2%: Այս մասին է նշվում ԱՄՀ-ի «Համաշխարհային տնտեսության հեռանկարները: Կայուն, բայց դանդաղ. կայունությունը դիվերգենցիայի համապատկերում» ապրիլյան զեկուցման մեջ:

ԱՄՀ տվյալներով Հայաստանում արժեզրկումը 2024թ. կաճի մինչեւ 3,1%: Հիշեցնենք, որ 2023թ. այն կազմել է 2%: 2025թ. համար կանխատեսվում է արժեզրկման 3,7%, մոտենալով նպատակային 4%-ին:

Գործազրկության աճը 2024թ. կլինի մինչեւ 13%: Հիշեցնենք, որ 2023թ. այն կազմել է 12,5%, իսկ 2025թ. կանխատեսվում է 13,5%:

Նշենք, որ Համաշխարհային բանկը իր ապրիլյան կանխատեսման մեջ նույնպես բարելավել է Հայաստանի ՀՆԱ-ի աճի կանխատեսումը: 2024թ. համար նախկին 4,7%-ից մինչեւ նորացված 5,5%: 2025թ. համար Համաշխարհային բանկը կանխատեսում է նախկին 4,5%-ից տնտեսության աճ մինչեւ նորացված 4,9%: Համաշխարհային բանկի կանխատեսման համաձայն, արժեզրկումը կաճի մինչեւ թիրախային 4%: Միջազգային վարկանիշային գործակալությունները Հայաստանի համար 2024թ. կանխատեսում են ՀՆԱ-ի աճ 6%-ից մինչեւ 6,2%:

Մեր երկրի Կենտրոնական բանկը, անցում կատարելով դեպի դրամավարկային քաղաքականության մշակման նոր համակարգ, 2024թ. սկզբից սկսած սկսել է հաշվել ՀՆԱ-ի կանխատեսումը մի քանի սցենարներով, ցույց տալով հնարավոր աճը ոչ թե կոնկրետ մեկ մակարդակում, այլ միջակայքի մեջ: Մասնավորապես, ՀՀ ԿԲ-ի կանխատեսմամբ, 2024թ. ՀՆԱ-ի աճը կարող է կազմել 5,3-6,4%: Պրոֆ. Թ.Մանասերյանը հիշեցնում է, որ տարվա սկզբին արել է կանխատեսում գործարար ակտիվության ցուցանիշի աճի վերաբերյալ մինչեւ 7-8%, եթե դրական տեղաշարժերը ունենան իներցիոն ընթացք: Հակառակ դեպքում, ՀՆԱ-ի աճը առավելագույնս կարող է սահմանափակվել 3-4%-ով:

## Որոշ եզրակացություններ՝ դատողություններ անելու համար

Չնայած քաղաքական վայրիվերումներին, Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսությունների փոխկապակցվածությունը շարունակում է աճել: Ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմաններում Հարավային Կովկասն, ընդհանուր առմամբ, եւ Հայաստանը, մասնավորապես, հայտնվել են շատ ուշագրավ դիրքում, որը, ճիշտ է, միայն ժամանակավորապես, շարունակում է դրական ազդել մեր տնտեսության վրա: Հայկական բիզնեսի եկամուտները արտաքին առեւտրական շրջանառությունից տպավորիչ տեմպերով մեծանում են:

Ռուսաստանի կառավարությունը հրապարակել է կանխատեսում, որի համաձայն այդ երկրի ՀՆԱ-ն 2024թ, պետք է որ աճի 3,6%-ով: Հիշեցնենք, որ 2023թ. այդ ցուցանիշը կազմել էր մոտ 3,5%: Սա Ռուսաստանի համար բարձր ցուցանիշ է, ինչից կանխատեսողները եզրակացրել են, որ ԵԱՏՄ գործընկեր երկրների տնտեսությունները դրանից օգուտներ են քաղելու: Հայտնի է մեկ այլ կանխատեսում, որ 2025թ. տնտեսության աճի տեմպերը կարող են նվազել, նույնիսկ կարող է գրանցվել անկում, սակայն կես տարի անց աճի ցուցանիշները կրկին շարունակական են լինելու: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հայկական եւ ռուսական տնտեսությունների նման փոխկապակցվածությունը չպետք է խանգարի, որ Հայաստանում լրջորեն մտածեն արտաքին առեւտրի դիվերսիֆիկացման մասին: Առայժմ նման դիվերսիֆիկացիայի օրինակ են համարում ԱՄԷ-ն եւ Չինաստանը, սակայն հայտնի է նաեւ, որ այդ երկրների հետ առեւտուրը Ռուսաստանի հետ առեւտրի (վերարտահանման) արդյունք է: Պետք է մտածել հայկական ապրանքների որակը եվրոպական ցուցանիշներին համապատասխանեցնելու մասին: Սա միայն պետության դերն է, որովհետեւ մասնավոր հատվածն այս հարցը ինքնուրույն լուծել չի կարող:

Անցյալ տարի Ֆրանսիայի նախագահ Է. **Մակրոնը** ասել էր, որ կխնդրի ֆրանսիական բիզնեսին ուսումնասիրել, թե ինչպես կարելի է մեծացնել հայկական ապրանքների մուտքը ֆրանսիական շուկա: Առայժմ պատասխան չկա: Սրանից պետք է եզրակացնել, որ ֆրանսիական շուկան, ինչպես եվրոպական մյուս շուկաները, սպասում են միայն իրենց չափորոշիչներին համաձայն արտադրանքի: Հայաստանի արտաքին առեւտրական գործընկերների շարքում Եվրոպական Միությունը վերջին տարիներին աստիճանաբար ավելի ու ավելի համեստ տեղեր է զբաղեցնում:

Հայաստանի հռչակած քաղաքական ու տնտեսական առաջնահերթությունների միջեւ ակնհայտորեն խզում է գոյանում: Եվրասիական փորձագիտական ակումբի մասնագետները համոզված են, որ առանց նվազեցնելու Ռուսաստանի հետ մեր առեւտրաշրջանառության ծավալները՝ պետք է լրջորեն ու հետեւողականորեն զբաղվել նոր շուկաների փնտրտուքով:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ մայիսի 8-ին կայանալիք Բարձրագույն խորհրդի նիստին, ապա Հայաստանի մասնակցությունը եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացին, մեր գնահատմամբ, միանշանակ պետք է լինի կառուցողական եւ հետեւողական: Պետք է շարունակել փնտրել նոր հնարավորություններ Բելառուսի եւ, հատկապես, Ղազախստանի հետ մեր առեւտրի ծավալները շարունակական կերպով մեծացնելու համար:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
դգդ, պրոֆեսոր

# Պերճ Թերզյանի ստեղծագործություններին նվիրված ժողովածու



*Օրերս շնորհակալությամբ ստացանք եգիպտահայ հայտնի մտավորական, ազգային դիմագծի ու անաղարտ հայերենի աներեր պահապան ու ջատագով* ***Պերճ Թերզյանի*** *«Գրախոսականներ եւ անդրադարձներ Պերճ Թէրզեանի գիրքերուն մասին եւ իր հետ եղած հարցազրոյցներ» ժողովածուն (Գահիրէ, 2024, 278 էջ): Այս առիթից օգտվելով ցանկանում եմ մի քանի խոսք ասել բարեկամիս հայաշունչ անձի եւ բծախնդիր ու ճշտապահ ստեղծագործությունների մասին:*

Պատմությունը մեր հիշողությունն է, ազգապահպան հզոր զենքը: Ազգերը, երբ կորցնում են պատմական հիշողությունը, հաղթանակը՝ արդարի եւ հավատը՝ հաղթանակի նկատմամբ, մեռնում են: Դա ավելի է կարեւորվում, երբ վերաբերում է Սփյուռքին: Այդ թվում՝ եգիպտահայ գաղութին, որը շնորհիվ իր նվիրյալների, կարողացավ օտար հողի վրա ստեղծել անհրաժեշտ կենսապայմաններ ու կրթամշակութային օջախներ: Նրանցից մեկը ազգանվեր գործիչ ու գրչի համեստ մշակ, տարիների ու կենսափորձի վաստակած ծանրությունից սակավախոս դարձած Պ. Թերզյանն է՝ բացառիկ ազնիվ ու իրատես անհատ, որն արգասաբեր մտածողություն ունի եւ բեղուն գրիչ: Նա մարդկային այն տեսակն է, որ ամեն ինչով նպաստում է հայ մնալու, ազգային դեմքը չկորցնելու, հայոց ոգին ու ձգտումները անաղարտ պահպանելու ու սերունդներին փոխանցելու ազգանվեր գործին:

Փոքր տարիից «ընթերցասէր եղած» Պ. Թերզյանի հոգու միջուկը գիրն ու գիրքն են եղել, հայ ազգն ու նրա անհատակ մշակույթը: Ժողովածուի նյութերին ծանոթանալով հասկանում ես, որ նա սովորական անձ չէ, այլ ուժեղ ու ստեղծագործող անհատականություն: Իսկ այդպիսի անհատները մեծարման համար չէ, որ արարում են, քանի որ նրանք իրենց գործով, վաստակով, թողած նշանակալի ժառանգությամբ եւ կերտած կենսագրությունով արդեն բարձրունքում են: Թերզյանը գնահատելի երեւույթ է: Նա զգալի վաստակ ունի եւ Սփյուռքում իր հրատարակած հոդվածներով ու գրքերով ստեղծել է մամուլի յուրահատուկ միջավայր ու մթնոլորտ:

Իսկապես, եթե փորձենք Ժողովածուի էջերը թղթատել, կգտնենք այնտեղ Թերզյանի էությունը, նվիրումի, հավատքի, զոհողության եւ անշահախնդիր ծառայելու ոգին: Ազգային կյանքի հավատավոր նվիրյալը ծառայել է ազգապահպանության վեհ գործին եւ կցանկանայինք այսուհետ եւս վերանորոգ ուխտով շարունակի իր նվիրական այդ երթը: Նա հաճախ է շեշտում, որ իրեն գրող կամ հետազոտող չի համարում: Սակայն հաճախ կարելի է տեսնել, թե որքան մտահոգ է ու անհանգիստ հատկապես Սփյուռքի վաղվա օրվա համար. «Եթէ այսօր չապահովենք մեր նոր սերունդին ազգային դաստիարակութիւնը, ապա՝ 20-30 տարի պիտի չունենանք ազգային ծառայութեան եւ Հայրենիքին օգտակար ըլլալու նուիրուած սերունդ մը. այսօրուընէ պատրաստելու ենք մեր ապագայ առաջնորդները»,-մի անգամ ափսոսանքով ասաց նա:

Եղել են պահեր ու խնդիրներ, որոնց կողքով չի կարողացել անտարբեր անցնել եւ դիմել է գրչի ու թղթի ծառայությանը: Նրա աշխատությունները հաստափոր չեն, ամպագորգոռ թեմաներ չեն ընդգրկում, սակայն ասելիք ունեն, պարզ, հասկանալի եւ ջինջ ու ծորուն արեւմտահայերենով ներկայացնում են խնդիրները: Ամենակարեւոր արժանիքը, թերեւս, դրանց անկեղծությունն է, խնդրո առարկա թեմայի բոլոր եզրերի իմացությունն ու ամբողջական ընկալումը: Մի առիթով խոստովանել է. «Թէեւ դաստիարակութիւնս եւ ուսումնասիրութիւնս միտուած չէին որ ես գրող մը ըլլամ կամ գրագէտ մը, սակայն ...Անցեալ դարու 70-ականէրէն սկսեալ հայերէն լեզուով յօդուածներ եմ գրեր, իսկ «Արեւ» թերթի արաբերէն ամսօրեայ յաւելուածին առիթով 1998-էն՝ նաեւ արաբերէն»:

Հանդարտաբարո վարքագծի տեր, խաղաղ ու անառարկելի ոճով, «նիւթի մէջ անգամ ներքին անհանգստութիւնը կամ անհամաձայնութիւնը» անկողմնակալ, համակողմանի, նկարագրական մանրամասներով քողարկող (ինչն ավելի վստահություն է հաղորդում նրա խոսքին) Պ. Թերզյանի նախորդ տարիներին կատարած ազգանվեր գործերի, արձանագրող գրչի ու տարեգրողի, ասելիք ու անելիք ունեցող անհատի ստեղծագործությունների յուրատեսակ ամփոփում ու ամբողջացում է սույն Ժողովածուն: Այստեղ անհատն է, Աշխարհի քաղաքացին, հայի ու սփյուռքահայի տեսակը, տարիների իր կենսափորձով, աշխարհընկալմամբ ու մինչեւ ուղնուծուծը ազնվաբարո կեցվածքով՝ գրիչ-թուղթ մոլորակի անխոնջ կատարողը: Ժողովածուն լայն ընդգրկում ունի եւ անդրադարձներ է պարունակում XX դարի վերջին եւ XXI դարի առաջին քառորդների Սփյուռքում, Մայր հայրենիքում եւ եգիպտահայ գաղութում համազգային մտահոգության իրադարձությունների մասին:

Ժողովածուում ընդգծվում է, որ Թերզյանի հոդվածների հիմնական նյութը ազգային կյանքն է՝ իր խնդիրներով, հոգսերով, աշխույժ առօրյայով ու փոքրիկ հաղթանակներով: Իրադարձությունների կիզակետում իր մտորումներով, աշխարհընկալմամբ եւ անորոշ վաղվա օրվա նկատմամբ մի քիչ էլ անհանգստությամբ, մարդն է, հայն ու եգիպտահայը: Այստեղ իրար կողքի են մեկտեղվել մամուլի մշակն ու հայի ապագայով մտահոգ կրոնավորը, հայկական ռադիոժամի աշխատակիցն ու մարզամշակութային ասպարեզի ներկայացուցիչը, նշանավոր եւ ունեւոր հայն ու կրթական գործի երախտավոր մշակը: Նրանք բոլորն էլ լարված են, մտահոգ, վաղվա օրվա նկատմամբ անվստահ: Հոգս ու ցավ ունեն նրանք, առաջին հայացքից անտեսանելի կարոտ՝ Հայրենիքի ու հայի տեսակի հանդեպ, Եղեռնից ժառանգած հոգու խորքում անթեղված անթաքույց ցավ ու մորմոք...: Այս ամենով հանդերձ, նշվում է, որ Թերզյանի այդ հրապարակումներում այս կամ այն հարցի վերաբերյալ մտորումներում ու եզրահանգումներում նկատելի է լավատեսությունը, ինչն, անկասկած, մեծ հոգու, հզոր անհատի առհավատչյան է: Այդ լավատեսությունն ու անսասան հավատն ապագայի նկատմամբ դրսեւորվում է հատկապես այն դեպքերում, երբ խոսք է գնում հայոց պետականության մասին:

Ժողովածուում նշվում է, որ Թերզյանը խորը մորմոքով արձանագրելով հայ մարդու մեծագույն ցավն ու ողբերգությունը, կատարում է ուժեղ ու «պինդ» անհատին վայել եզրահանգումներ՝ անհրաժեշտ ու պարտադիր է համարում անցյալից դասեր քաղելը, վերլուծել իրադարձությունները խորքային մակարդակով եւ հասկանալ, ճշգրտել համայն հայության անելիքները, եւ այդ նվիրական առաքելության իրականացմանը որպես գրավական տեսել է հայոց պետականությունը: Իրեն գիտակ ուսումնասիրող չհամարող Թերզյանն այս դեպքում հանդես է բերում նյութի եւ իրավիճակի խորը իմացություն եւ անհրաժեշտ է համարում թուրքական կողմի հակահայ քարոզչությանն ու մերժողականությանը արժանի պատասխան տալը, ընդգծելով այն խիստ վտանգավոր միտումը, որ թուրքերին երբեմն հաջողվում է հայերին ներկայացնել իբրեւ իսլամի թշնամիներ եւ թուրքերին կոտորողներ:

Թերզյանն սփյուռքահայ այն գործիչներից է, որոնք երբեք կուսակցական չդարձան եւ առանց այդ համակարգում աթոռ, դիրք կամ իշխանություն ունենալու որեւէ ակնկալության, ներքին համոզմունքով եւ նվիրումով, բարձր գնահատելով հայությանը զանազան արկածախնդրություններից հեռու պահելու «Արեւ» թերթի զգոն եւ շրջահայաց մոտեցումները՝ ծառայեցին ազգին ու նրա ցավերը դարմանելու դժվարին գործին: Ժողովածուում տարբեր գրախոսների կողմից արձանագրվում է, որ անաչառ փաստագրողի դիրքերից Պ. Թերզյանը մշտապես իրատեսորեն արձանագրում է կատարված իրողությունների պատմությունը: Սակայն զգացվում է նաեւ, որ նա կորուսյան ցավ ու մորմոք ունի հոգում անթեղած, տագնապ ու անհանգստություն հայադեմ դրսեւորումների նկատմամբ: Դրսեւորումներ, որոնք աղքատացնելով մշակութային, հոգեւոր ու կրթական ասպարեզները, վտանգում են հայապահպանության կարեւորագույն գործառույթները եւ, վերջապես, Սփյուռքի գոյությունն ընդհանրապես:

Ավարտելով ցանկանում եմ մեկ անգամ եւս ընդգծել, որ Սփյուռքում այսօր հաց վաստակելն ավելի հեշտ է, քան եղեռնյան դաժան տարիներին: Սակայն այսօր էլ հայ մնալն ու հայ մեծացնել-կրթելն է դարձել չափազանց դժվար: Իսկ այդ դժվարին, նվիրական ու ազգահաճո գործում խիստ անհրաժեշտ են Պերճ Թերզյաններն ու նրանց արգասաբեր գրիչները, ինչպես նաեւ՝ նրանց արժանին մատուցելուն, մեծարելուն կոչված հրապարակումները՝ ի դեմս ներկա ժողովածուի:

Շնորհակալություն մեծահարգ Պերճ Թերզյան-հեղինակին՝ իր բացարձակ նվիրումի ու հայ տեսակին լիարժեք հավատարիմ լինելու, Արեւիս տակ Մարդ մնալու համար եւ բոլոր նրանց, ովքեր նկատում, գնահատում եւ արժանին են մատուցում նրան ու նրա գրվածքներին:

23.04.24

# Թեհլիրյանը ցեղասպանության տարիներին նաեւ 200 որբ է փրկել

## *Ուշագրավ մանրամասներ*



Ցեղասպանության թանգարան-ինստիտուտն օրերս արժեքավոր ընծաներ է ստացել: Սողոմոն Թեհլիրյանի հորեղբոր ընտանիքի ժառանգներն են փոխանցել տարիներով շահած-փայփայած լուսանկարներն ու օրագիրը, որ Սողոմոնի կյանքի մասին հետաքրքրական դրվագներ է պատմում:

«Թեեւ օրագիրն ամբողջությամբ չենք ուսումնասիրել, բայց որքանով հասցրել ենք աչքի անցկացնել, հետաքրքիր դրվագներ, այնուամենայնիվ, կան: Իհարկե, կլինեն նաեւ անձնական այնպիսի տեղեկություններ, որ հանրային հրապարակման ենթակա չեն լինի»,- «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գլխավոր ֆոնդապահ **Գոհար Խանումյանը,** որ կապ է հաստատել Թեհլիրյանի հարազատների հետ ու հենց նրա՝ Գոհարի շնորհիվ են արժեքավոր նմուշները հասել Հայաստան:

Թեհլիրյանի՝ մոտ մեկ տասնյակի հասնող նոր լուսանկարներ են հանգրվանել թանգարան-ինստիտուտում, որոնցից ամենաուշագրավը 1907-ին արվածն է: Այստեղ Սողոմոնը 12-13 տարեկան է:



«Առավել արժեքավոր է այն լուսանկարը, որտեղ կա նաեւ Արմենուհին՝ Թեհլիրյանի ընտանիքի անդամը, որին Սողոմոնն ազատել է մուսուլմանական գերությունից՝ մեկ ոսկու դիմաց: Թեհլիրյանի կենսագրության կարեւոր դրվագներից մեկն էլ այն է (որն, ի դեպ, ավելի քիչ է լուսաբանված եւ ներկայացված հասարակությանը), որ հայ վրիժառուն գերությունից ազատել է հայ երեխաներին կամ զբաղվել որբացածների ճակատագրով: Արմենուհու մասին պատմությունը հենց դրա վկայությունն է: Իր մեկ այլ հուշատետրում Թեհլիրյանը գրում է, որ այդ՝ որբափրկչական գործունեության շնորհիվ կարողացել է ազատել մոտ 200 երեխայի: Նա **Սեբաստացի Մուրադի** ընկերն էր, եւ գիտենք, որ հենց Մուրադն էր մուսուլմանների համոզել՝ մեկ ոսկի տալ, դիմացը մեկ որբացած երեխա ստանալ»,- նշում է «**Ազգ**»-ի զրուցակիցը:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Պոզներյան տեսության կանոնները` Սերգո Երիցյանի նոր գրքում




*«Վլադիմիր Պոզների հարուստ լրագրողական աշխարհը միշտ լիցքեր է պարունակում, որոնցից կարելի է ոչ միայն սնվել ու դասեր քաղել, այլ նաեւ կառուցել սեփական լրագրողական աշխարհը, որը չի խախտում համընդհանուր եւ ոչ մի գրված ու չգրված օրենք ու ավանդույթ»*

**Սերգո Երիցյան**

«Թեքեյան» կենտրոնում օրերս կայացավ Հայաստանի Թեքեյան մշակութային միության անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերգո Երիցյանի` «Վլադիմիր Պոզներ. սիրտս հայկական կողմում է: Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո դա Վինչիից»** գրքի շնորհանդեսը:

Սերգո Երիցյանը գիրքը գրել է կյանքի վերջին մեկ-երկու տարում. այն տպագրվել է 2022 թվականին, սակայն պրոֆեսոր Երիցյանը չհասցրեց ներկա լինել շնորհանդեսին: Շնորհանդեսին ներկա էին Սերգո Երիցյանի գործընկերները, ուսանողները, մտերիմները ու հարազատները` եւս մեկ անգամ արժեւորելու մասնագիտության եւ կրթության նվիրյալի հերթական նվերը ընթերցասեր հանրությանն ու հատկապես ապագա լրագրողներին. Սերգո Երիցյանի նպատակն էր գրքի միջոցով ընդգծել հարցազրույցի ժանրի` պոզներյան տեսության կանոնները:






Գրքում տեղ են տրվել Վլադիմիր Պոզների` 2019 թվականի մայիսին Երեւանում ունեցած հանդիպումներին, այնտեղ արտահայտված մտքերին, ինչպես նաեւ լրատվամիջոցների հրապարակումներին: Ներկայացվում են նաեւ Վլադիմիր Պոզների հարցազրույցները հայորդիների հետ, իսկ լրագրության մասին պոզներյան ասույթները նրա յուրատեսակ գնահատականն են մասնագիտությանը:

Գիրքը պատկերացում է տալիս նաեւ Պոզներ- Հայաստան կապի մասին, որը սկսվում է նրա ամուսնությամբ Ալեքսանդր Սպենդիարյանի ազգականուհու` **Վալենտինա Ջեմբերջիի** հետ:

ՀԹՄՄ նախագահ, Մշակույթի վաստակավոր գործիչ, պ.գ.դ., պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը** բարձր գնահատեց գրքի լույսընծայումը.«Գիրքը խիստ արժեքավոր է: Արծարծվում են բացառիկ կրթական, մանկավարժական մի շարք հարցեր, ինչի շնորհիվ այն կարող է լինել դասագիրք լրագրողների համար»,-նշեց Ռուբեն Միրզախանյանը եւ ընդգծեց` Սերգո Երիցյանն իրեն հատուկ մոտեցմամբ ու աշխատասիրությամբ ստեղծեց արժեքավոր աշխատություն, որն իսկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Շնորհանդեսին ելույթ ունեցան մերօրյա անվանի լրագրողներ, խմբագիրներ, որոնք խոստովանեցին` Սերգո Երիցյանը շնորհակալ գործ է արել. մասնագիտությանն անմնացորդ նվիրյալը ընթերցողներին եւ լրագրողներին է թողել կարեւոր ու արժեքավոր աշխատություն:

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Արամ Աբրահամյանը,** Մշակույթի վաստակավոր գործիչ **Արմեն Ամիրյանը**, գրող, գրականագետ, թարգմանիչ **Ֆելիքս Բախչինյանը**, «Գոլոս Արմենիի» թերթի մշակույթի բաժնի մեկնաբան **Սոնա Մելոյանն** ու «Մեդիամաքս» լրատվական գործակալության հիմնադիր-տնօրեն **Դավիթ Ալավերդյանը** խոսեցին Սերգո Երիցյան անհատի, մանկավարժի, լրագրողի եւ գրականագետի ծանրակշիռ վաստակի մասին եւ հույս հայտնեցին, որ նրա կրթած սերունդները կշարունակեն պահել մասնագիտական որակները:

Անդրադարձ եղավ նաեւ Սերգո Երիցյանի` որպես փորձառու հարցազրուցավարի գործունեությանը, ինչի շնորհիվ հեռուստադիտողները դեռ երկար կհիշեն նրա հեղինակած հաղորդումները: Նա ինքն էլ հետաքրքրված էր Վլադիմիր Պոզների գործունեությամբ, նրան համարում էր անգերազանցելի լրագրող-հարցազրուցավար, որը ազատ եւ բաց լրագրության իրավունքների ու սկզբունքների իրական օրինակ էր:

100-ից ավելի գրքերի, մասնագիտական ձեռնարկների, գիտական հրապարակումների հեղինակ Սերգո Երիցյանի ծանրակշիռ վաստակում այս գիրքն իր ուրույն տեղն ունի. ինչպես հենց հեղինակն է նշում. «Վլադիմիր Պոզների միջոցով ավելի լավ կարելի է հասկանալ աշխարհի մեծաչափ եւ փոքրաչափ փոփոխությունները... Պարզապես հավատանք, որ այսպիսով չավարտվեց պոզներյան իրական լրագրության ժամանակաշրջանը. նա դեռ ասելիք ունի»:

**Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ**
**Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն**

# Հայաստանի էներգետիկան 100 տարի առաջ

1924 թվականին Հայաստանի էներգետիկ տնտեսությունը բաղկացած էր հետեյալ էլեկտրակայաններից.

Երեւանում գոյություն ուներ երկու հիդրոէլեկտրակայան` 2206 եւ 36.6 կՎտ հզորությամբ: Հիդրոագրեգատները աշխատում էին գերծանրաբեռնված եւ չէին կարողանում բավարարել պահանջարկը: Առաջին էլեկտրակայանը տարեկան արտադրում էր 414 հազար, իսկ երկրորդը` 82 հազար ԿՎտժ էլեկտրական էներգիա: Ընդհանուր արտադրանքից լուսավորության համար օգտագործվել է 312 հազար ԿՎտժ, իսկ 184 հազար ԿՎտժ-ը` տեխնիկական նպատակների համար:

Լենինական քաղաքում (Գյումրի) աշխատում էին երկու դիզել գեներատորներ օրգանական վառելիքով: Նրանցից յուրաքանչյուրի հզորությունը կազմում էր 55.2 ԿՎտ: Ներկայի Վանաձոր քաղաքում 1924 թվականի մայիսի 1-ին շահագործման է հանձնվել հիդրոէլեկտրակայան 294.2 ԿՎտ հզորությամբ:Այն հիմնականում օգտագործվել է լուսավորության համար:

Գորիս քաղաքում գոյություն ուներ մեկ հիդրոէլեկտրակայան 55.2ԿՎտ հզորությամբ: Հիդրոագրեգատները հին էին: Դիլիջան քաղաքում կար 22.1ԿՎտ հորությամբ ֆիզիկապես մաշված հիդրոագրեգատ: Ստեփանավանում աշխատում էր 18.3 Կվտ հզորությամբ հիդրոէլեկտրակայան: Կողբում կար 18.3 կՎտ հզորությամբ հիդրոէլեկտրակայան: Այն շահագործման էր հանձնվել 1921թվականին եւ համարվում է առաջին գյուղական ՀԷԿ-ը: Կարելի է ենթադրել,որ այն կառուցվել է Կողբ գետի վրա:

Ալավերդիում պղնձաձուլական եւ էլեկտրոլիզի գործարանների համար աշխատում էին երեք հիդրոագրեգատներ 1103.3 ԿՎտ հզորությամբ: Այստեղ չեն նշվում 294.2 ԿՎտ հզորությամբ երկու դիզելային վառելիքով աշխատող գեներատորները, որոնք չեն աշխատել: Շահալիում սղոցարանի եւ լուսավորության համար աշխատում էր հիդրոէլեկտրակայան 55.2 ԿՎտ հզորությամբ: Կարելի է ենթադրել, որ այն կառուցվել է Փամբակ գետի վրա:

Կապանի հանքերի եւ պղնձաձուլման համար գոյություն ունեին 735.5 ԿՎտ գումարային հզորությամբ ագրեգատներ: Այդ թվում 110.3ԿՎտ հզորությամբ երկու հիդրոագրեգատ,147.1 ԿՎտ հզորությամբ երկու դիզել գեներատոր եւ հանքից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող 220.6 ԿՎտ հզորությամբ չաշխատող ՀԷԿ: Վերականգնումից հետո այն կունենար 588.4 ԿՎտ հզորություն:

Կարելի է եզրակացնել, որ 1924թ. վերջում Հայաստանում գոյություն ուներ 12 էլեկտրակայան 3556.1 ԿՎտ ընդհանուր հզորությամբ:

Հարկ է նշել,որ Հայաստանում 20-րդ դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ` 3165 կՎտ գումարային հզորությամբ: 13 կայաններից 9-ը ջրային էին, աշխատում էին ջրի էներգիայի հաշվին, 4-ը` ջերմային (աշխատում էին ներքին այրման շարժիչներով): Տարեկան արտադրվում էր 5.1 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Համեմատության համար նշեմ, որ 20-րդ դարի սկզբին աշխարհում տարեկան արտադրվել է մոտ 15 միլիարդ կՎտժ էլեկտրական էներգիա: Էլեկտրակայաններ են շահագործվել նաեւ Կարս քաղաքում: Հայաստանում առաջին էլեկտրական լապտերը վառվել է 1903 թվականին Դիլիջանում:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
**Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր**

# Կնքվեց համաձայնագիր

**Վերջերս Ռուսաստանի Դաշնության Դուբնա քաղաքում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի եւ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) միջեւ կնքվեց համաձայնագիր հիմնարար գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության եւ կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ:**

**Համաձայնագրով նախատեսվում է հիմնել Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի եւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համատեղ հետազոտական կառույց` ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների եւ ՄՀՄԻ-ի գիտնականների ու մասնագետների փոխգործակցությունը պահպանելու, գիտատեխնիկական բնագավառում, ինչպես նաեւ կադրերի պատրաստման ու բնագիտության հանրայնացման ոլորտում համագործակցությունը խորացնելու նպատակով:**

**Հիմնական հետազոտական ուղղություններն են տեսական ու փորձարարական ֆիզիկան, աստղաֆիզիկական հետազոտությունները, մոդելավորումն ու տվյալների մշակումը, միջուկային ֆիզիկայի մեթոդները որոնողական հետազոտություններում, առաջատար հետազոտությունները նոր նյութերի ֆիզիկայի ոլորտում, կենսաբանական հետազոտությունները, ներառյալ ռադիոկենսաբանական երեւույթների մոլեկուլային մեխանիզմների ուսումնասիրությունն ու տրեկային մեմբրանների մոդիֆիկացիան, երկրաֆիզիկան ու սեյսմոլոգիան, տեղեկատվական տեխնոլոգիաները: Նախատեսվում է նաեւ իրականացնել համատեղ մագիստրոսական ու ասպիրանտական ծրագրեր, նախագծերի ու գիտական հետազոտությունների արդյունքների փորձաքննություն:**

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի**
**2023 թվականի ֆինանսական հաշվետվություն**

**ՄՈՒՏՔ**

| | |
|---|---|
| 1. Արտադրանքի իրացումից հասույթ | 1,095,945 |
| 2. Ծառայությունների մատուցումից հասույթ | 220,000 |
| 3, Անհատույց ստացվող ակտիվներ | 48,444,617 |
| 4. Այլ եկամուտներ | 0 |
| **Ընդամենը մուտք** | 49,760,562 |
| **ԾԱԽՍ** | |
| 1. Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսեր | 996,490 |
| 2. Աշխատավարձ եւ դրան հավասարեցված ծախսեր | 40,308,638 |
| 3. Գործունեության հետ կապված վարչական ծախսեր | 1,978,945 |
| 4.Ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսեր | 1,437,080 |
| 5. Այլ ծախսեր | 5,039,409 |
| **Ընդամենը ծախս** | **49,760,562** |
| **Հարկվող շահույթը** | **0** |
| **Հաշվետու տարվա շահութահարկի գումարը** | **0** |

*«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ –ի տնօրեն` **Տարախչյան Արա***

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը`*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 25.04.2024, գինը` 200 դրամ, տպագրում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունեաց 70ա: